

ՄԱՆԻՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Դրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ ԹԻ 40 2 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մախու շուրջառ (հմբագրական) Տ. Ա. — Հանդիպումը. ԼԵՒՈՆ ՔԻՐԻՇՆԱՆ. — Սեռեհաս (Բանաստեղծություն) ՇԱԽԱՍՊ ՄԻԱԾԱՆ. — Երկու բարեկամներ (Նորավայ) ՍԻՀՐԱՆ ԴԱԻԹԵԱՆ. — Մանիակն ու հովուհին (Հեկեաթ) ՍԱՐՈՐԻԻ. — Յուզահանդեսի մը շուրջ. X.

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի արեւելեան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար հաւաստի դր. եւ գաւառներուն համար յիսուս դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ժրանք կամ 5 րուպի: Թղթարական ծախքը հմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւնը չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ըլլէ ամեն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերթ ստացած են, պէտք է ինքնոյն իմացնեն հմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատառութեան չեն առնուիր: Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիրամասչելի պայմաններով:

Ձեռ-Բէ կը ՏԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐՍՅԻ
Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) فزته سى اداره سى

ԲԱՐՈՑՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍ
01 — 04. Պոլիս, Ղալաթիա
Rédaction de la Revue MASSIS
Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. Կապիտալի թանկութեան ֆոնդային ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գոյն առնելով իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբ եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէնկողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուններէն զատ, Բարիզի՝ Օրէրա, Վոսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆուլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ Պօռտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն-Մարչէն, Լուվրի վաճառատունները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէի, Օթէրար Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները, Թրանսաթլանթիք, Հալի-Մարսիլիա նաւարկութեան, Մուլայի Փոխադրութեանց, Քրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Ընկերութեան գրամատունն է Բրէստ Լիօնէն:

Այն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել հրդեհի վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար, Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ — Պոլիս: Մահմուտ փող, Պէտլիք Նելալ փառ, թիւ 14, Լա Գօնֆրանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր տնօնական սեփականութիւնը եղող աքիբափ վաճառատուն մը, Շուկայ Սահաֆար, թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

ՕՐՈՒԱՆ ՄԵԾ ՅԱԶՈՂ ՈՒԹԻՒՆԸ ԵՐՐՈՐԴ ԴԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅՈՒՆԱՀԱՆԴԵՍ ՍԻՆԿԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ - ՓՈՂՈՅ, ԹԻՒ 343 ԵՒ 343 ԿՐԿԻՆ

ՊՈՆ ՄԱՌԵԿԻՆ ԴԵՍ

ԱՍԷՆ ՕՐ ԲԱՑԷ

ՄՈՆՏԵՐ ԱՂԱՏ

1-5

ՓԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԴՐ. ԸՆԿ.

Հոգեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԴՈՒՔՍ ԱՌԻՏԵՔ ՊԱՎԻԹ

ԱՍ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. ընդդէմ հրդեհի եւ ծովային անհանգիստութեան (Ի ՄԱՏԻՏ)

Ապահովագրութիւնի կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւորութեան է Ի Կ. Պոլիս, Բոքսի Լիօնի

Ընդհ. եւ լիազօր ցերեկայացուցիչ Թուրքիոյ

Պ. ՅԵՐԱՏԵԱՆ

Դրամանակ, Պոլիս, Հանգրուլ խան, Թ. 52-53-54-55-56

3-10

լաւարարաւ իշխանագ թարմե ԺԺԴ

ձիւղ ու զամնիւղ--ձիւղ փնտածնիւղ

ԺԱՄԱՆՅ կամ ԸՆՏԱՆՆԿԱՆ ԽԱՂԵՐ

Դրեց՝ Զ. Տ. Ս. ՓԱՓԱՋՅԱՆ

Ընտանեկան տնային խաղերու զգուշացիկ

Անհրաժեշտ՝ ծերերուն, երիտասարդներուն

եւ տղայոց համար միանգամայն: Ամէն հա-

տիկ մարդաց քով պէտք է գտնուի այս

զրօտի ու օգտակար գիրքին հետ մը:

Այլեւ մի՛ ըսէք թէ «Իրերները երկարեցան,

ինչպէ՞ս ժամանակ պիտի անցընենք»: ԺԱ-

ՄԱՆՑՈՎ Կընաք ժամերով զրօնուի եւ զրօ-

նել ձեր հիւրերը:

Կը գտնուի ամէն զրաւմտաներու քով,

եւ հեղինակին քով՝ Ի Պոլսու: Դիւն

Խիտ ռժաւ, հիւնգ դր. 5-5

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տն-
 սակ գոհարեղէններ ունե-
 նալ, աժան ու ճաշակա-
 ւոր, թէ՛ արեւելեան եւ
 թէ՛ եւրոպական ճաշակով
 պատրաստուած, ժամա-
 ցոյցներ, արծաթեայ գա-
 ւազաններ եւայլն, դիմե-
 ցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շու-
 կան, Մեծ-փողոց թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար
 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնո-
 ղին համար հարիւրին 5 զեղչ: Դործածուած
 գոհարեղէնները եթէ մնասուած չեն 100ին
 10 զեղչով եւ կ'առնուին. Իսկապատիկ՝ Գր-
 նաղներէն՝ 100ին 15 զեղչով: 3-10

ԺԻՒՐԱԿԱՆ ԱՆՏԻ ԴԷՄՆԱԿԱՆ ԶԵՆՈՒԹՅՈՒՆ

Ծիրակա՛ն ախար դէմ նախագգուշուծեան միայն ծամբայ մը կայ, այն է մարմինը միշտ կենսական զօրութեամբ պահել որնոր գործեան կենսական զօրութիւնն, առողջութիւնն և դիմացողան ոյժ տալով կրնայ ըլլալ:



SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ ամենալաւ "ուտելիք—դեղ" է. որ շուտմը առողջութիւնը կը վերականգնէ և երակներու մէջ նոր հարուստ արիւն կը տարածէ:

Եթէ կազմութիւնը կատարեալ առողջութեան մէջ չէ և բարակցաւի առաջին նշանները երեան կ'ելլեն. ինչպէս տեղաւոր գունատութիւն, թեթեւակայն թելթար հազ, գիշերները սաստկացող բարեխառնութիւն և անորոշակի կորուստ ևն. ժամանակ վատնելու չէ, մէկէն ըսգովի Բաղադրութիւնն առնելու է. միակ դեղն է որ կրնայ մարդս առողջութեան և զօրութեան վերականգնել և այս եղիլութիւնը գործնականապէս կը տեսնուի վառնըլ հազարաւորներ տեսածեն և կը տեսնեն:

ԲԱԳՕՌԵ ԵՆՎԵՐՈՒԹՅՈՒՆ

կատարելապէս անուշահամ է. անորոշակի կենդանացունէ, և մարտողութիւնը կ'աճապարէ. Հիւանդութեան սերմը կը մեղքնէ և շուտմը մարմինը կը հաւաքէ: Ըսգովի Բաղադրութիւնն ընդմիջտ այս տեսնուած նշանով վարդադոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

21

ԳՈՐԾԱՐԱՆ

Գորգի մաքրութեան եւ նորոգութեան (Գրասենեակ՝ Մահմուտ—փաշա, Թարազքըլար, Մեծ Նոր Խանի կից, Թ. 37)

Այս հանրածանօթ գործարանին մէջ կը մաքրուին աղտոտած եւ փոշոտ թէ՛ մետաքսէ եւ թէ՛ բոլորէ՛ ամէն տեսակ ընտիր գորգեր, քիմիական դեղորեկց միջոցաւ, առանց ո՛ր եւ է արաւ կամ հեռք ձգելու: Բնդհակառակը, բոլորովին նոր երեւոյթ մը կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած գորգերը:

Ունի նաեւ առուելութիւն մը նոր գորգերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին մէջ մաքրուած գորգերը դերձ կը մնան ցեցերու (կիւլէ) կեր ըլլալէ:

Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով վնասուած գորգեր:

Այս գործարանը կը օտանձնէ նաեւ պարասակ նոր գորգեր, ինչ մեծութեամբ ու հաշակով որ ուզուի:

Յանձնարարութիւնը պէտք է ուղարկ գրասենեակը:

Դիւրամտացիի պարամներ: 2-10

ԱՐԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն տեսակ քօհաֆիյէ ապրանց

Մեծ—Շուկայ, Գիւրգէնիւրու դրան կից, Թ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց հաշակաւոր հովանոցներու վաճառատուն, Պօլիս, Մուլթան—Համամ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Այս երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ Քօհաֆիյէի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յատուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն տաղանտութիւն, եւ դիւրամտ չիլի գիներու առուելութիւնն ալ կ'ընծային հասարակութեան:

Արամ Վարդեան մեծապէս գոհ թողուցած է իր բազմաթիւ յաճախողները, կ'արժէ որ Շուկայ ելլող ամէն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հագալու համար:

2-10

ԱՄԱՌՆ

54^ր ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 40

2 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1904

ԾԱԽՈՒ ՇՈՒՐՋԱՌ

Շուկային ոլոր-մոլոր կամուրներէն մէկուն տակ, ուր սեպտեմբերի դժգոյն արեւին ճառագայթները հազիւ կը թափանցէին՝ քովընտի աղօտ ապակափեղկերէն մաղուելով. վաճառատան մը մէջ կը հանդիպիմ Տնտեսական Խորհուրդի քարտուղարին ու Պատրիարքարանի քարապանի մը որոնք խոշոր ծրար մը խնամով քակելու զբաղած են։ Ու կը հետաքրքրուիմ տեսնելու պարունակութիւնը որ դանդաղօրէն կը պարզուի, կը տարածուի, վաճառատան այդ մասին յատկացուած փոքրիկ բաժանումը նեղ գտնելով իր ծաւալին։ Բայց արդէն իսկ ցուցադրած է ինքզինքը՝ իր մասնակի բացուածքովը։ Նուրջաւ մըն է, քիչ չափ արժէքաւոր, որուն վրայ գտնուած ոսկեթել բանուածքներէն ու արծաթեայ բարկ խաւէն աւելի՝ հնութիւնը աչքի կը զարնէ ու յարգ մը կուտայ անոր, — «յարգ» բառին առեւտրական իմաստովը բնականաբար, քանի որ միւս յարգը՝ կրօնայինը՝ մէկ կողմ դրած էր այդ վայրկեանին։

Երկու բառով կը տեղեկանամ իրողութեան։ Հեռաւոր գաւառի մը զիւղական աղքատիկ մէկ եկեղեցիին կը պատկանէր այդ շուրջաւը զոր Պատրիարքարան զրկած էին՝ յարմար գինով մը վաճառելու խնդրանքով, արդիւնքը յատկացնելու համար եկեղեցիին նորոգութեանը կամ ապօր մօտ նիւթական պէտքի մը։ Եւ հիմայ, Շուկայ հտնուած էր, հնութեանց քանի մը ծանօթ վաճառականներու ցոյց տրուելու համար. հոն՝ ուր հանդիպեցայ այդ նուիրական առարկային՝ կար-

ծիքը առնելու եկած էին պատուական անձի մը որ տխուր չեղտով մը յայտնեց իր գնահատումը, աւելցնելով թէ ո՛ւր պէտք էր դիմել՝ ինքը գնող չըլլալով, այլ հասկցող մը միայն։

Սոսակցութիւնը կը շարունակուէր ու շուրջաւը կը մնար տարածուած՝ ողորմուկ դիրքի մը մէջ, սփռելով իր բաց կապոյտ գոյնը մեր աչքերուն, իր մաշած ծոպերը, իր ճմրթկած ծալքերը։ Գեղին ծերուկ տէրտէրը գործածած էր զայն երկար տարիներ, յետոյ իր յաջորդը՝ նորընծան, ան ալ իր կարգին թերեւս ծերացած հիմա։ Հարսնիքներու, մկրտութիւններու, թաղումներու գտնուած էր անիկայ, միշտ եկեղեցականի մը ուսերուն վրայ փառաւորուած, քղանցքներէն պղտիկ տիրացուներ բռնած՝ որպէսզի գետինը չի քսուի, փոյի կամ ցեխ չըլլայ։ Օրին մէկն ալ, գեղին շոջերը մտածեր էին որ այդ շուրջաւը աւելի օգուտ պիտի ընծայէր իրենց եկեղեցիին՝ ծախուելով, քան պահարանին անկիւնը մնալով։ Եւ հիմայ, լայնատերեւ ու չքեղ ծաղկի մը պէս որ իր թաղարէն ու ջերմանոցէն բրցուած՝ ծաղկեւաճառի մը խանութր կը փոխադրուի, ծախուելու համար, — փոյթ չէ թէ քանի մը ժամուան զարդը պիտի ըլլայ պարասրահի մը մէկ անկիւնը զետեղուած արհեստականօրէն ու յետոյ անպէտ բանի մը պէս նետուի, — այս խեղճ նախշուն շուրջաւն ալ վերջ ի վերջոյ պիտի երթար ինչաւ antiquaireի մը խանութը, անկէ ալ գուցէ զբօսաշրջիկի մը հնութեանց հաւաքածոյին մէջ զետեղուելու համար։

Բարապանը ամիոփած, կապած էր արդէն ծրարը և միշտ Տնտեսական Խորհուրդի քարտուղարին առաջնորդութեամբ՝ չեմ գիտեր ո՛ր վաճառատան կողմը ուղղուեցաւ ուր պիտի վճռուէր շուրջառին բաղդը:

Առանց ծայրայեղ բարեպաշտութիւն մը ծախել ուղեւում, — ինչ որ կարգ մը գրողներու յենարանն է, — կը խոստովանիմ թէ սրբախ ճմուռ մը ունեցայ այն վաղանցիկ երեւոյթէն որուն հանդիսատես եղած էի, և աչքերս ակահայ հետեւեցան՝ չուանի կտորուանքներով կապուած ու արագօրէն փոխադրուող այդ ծրարին որ մոռնետիկներու աղմուկին ու երթեւեկողներու ժխորին մէջ կ'անհետանար, հեռացող գրգալի էակի մը կամ սիրելի առարկայի մը տպաւորութիւնը թողլով վրաս:

Կիներ կան որոնք իրենց ագամանդները ձեռքէ կը հանեն՝ երբ ձախորդութեան մը հանդիպին. բանասէրներ՝ որոնք իրենց մատենադարանը bouquinisteին կը թողուն քանի մը ոսկիի փոխարէն. մէկը իր երկտասարդութեան ու գեղեցկութեան փայլուն տարիները ապրած է իր ագամանդներուն հետ, միւսը ուսումնասիրութեան երկար գիշերներ անցուցած է իր մատենադարանին հետ. ու երկուքն ալ ցաւով կը բաժնուին անոնցմէ: Բայց գէթ, գոհարեղէնները ուրիշ հարուստ կնոջ մը կուրծքը պիտի երթան զարդարել ու զիրքերը՝ ուրիշ բանասէրներու գրասեղանին վրայ հանգչիլ: Նորէն իրենց տարրին մէջ պիտի մնան Շուրջառը, աւագ, իր ճամբէն պիտի չեղի, պիտի այլ ուսերի, կորսնցնելով իր նուիրակութիւնն ալ, իր հմայքն ալ:

Միտքս՝ մեղադրել չէ ո՛չ գեղջկական եկեղեցին որ աղքատ է ու դրամի պէտք ունի, ո՛չ ալ Տնտեսական Խորհուրդը որ իր պարտքը կը կատարէ օրինաւորութեան սահմանին մէջ: Եւ սակայն choquant բան մը ունէր իր մէջ՝ այս լոկի կերպով կատարուող աճուրդը, այդ խնկարոյր շուրջառին ծախու հանուիր:

Ու կը մտածեմ որ, եթէ պարզ հրապարակագրի մը տեղ՝ որ այս քանի մը տողերը գրելէ աւելի բան մը չի կրնար ընել, որչափ ալ խորունկ ըլլայ իր կրած տպաւորութիւնը, եթէ կրօնասէր ու վեհանձն հարուստի մը

վիճակէր այս դիպուածական հանդիպումը «ծախու շուրջառ»ին, թերեւ ներշնչում մը կուենար զայն վերադարձնելու իր աղքատիկ եկեղեցիին, համեստ գումարով մը մէկտեղ: Յօդուածի միջոցաւ պատմուածք մը կըրնայ տալ այդ ներշնչումը և արտադրել ատանկ բարերար արդիւնք մը:

Տ. Ա.

ԿԻԼԻԿԻՈՅ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ վաղը՝ կիրակի՝ պիտի այցելէ Աղզ. Հիւանդանոց, և առաւօտուն ներկայ դառնելով ժամերգութեանց, Ս. Փրկչի մատրան մէջ, քարոզ պիտի խօսի: Յետոյ պիտի պտտի Հաստատութեան բոլոր յարկերը՝ իր հայրական օրհնութիւնը տալու պատասպարեալներուն: Խնամակալութիւնը մասնաւոր պատրաստութիւններ տեսած է արժանաւորապէս ընդունելու և մեծարելու համար Ն. Ամենապատուութիւնը:

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Երկու շաբթի օր նորէն հանդիպեցայ իրեն, Գում Գարուի կանանց յատուկ եկեղեցիին մէջ, կնոջ մը հետ — կնոջը հետ — իրեն, Եղիա Տէմիրճիպաշեանին:

Շրջանաւարաններու հանդէսին է եկեր, ըսին թերթերը. ինքը՝ վիճակիս մասին Պատրիարքարանէն տնօրինութիւն մը խնդրելու եկայ, կըսէր: Եւ իրօք, հանդիսական մը չէր անիկա, երբ այդպէս հեռուն՝ թերաստուերին մէջ սմբած, աննշանցած, ճառի՛ն ալ, քարոզի՛ն ալ անուշադիր, իր կեանքին վէպը կ'ողբերգէր:

Այն օրը, առաջին անգամ որ նշմարեցի զինքը այլադան հանդիսականներու թո՛ւ բոնին մէջէն, Մատամ Նիսընի կողին կոթընած կը մրափէր, խնկագոյն մօրուքը ցցած դէպ ի վարագուրապատ խորանը, ուղօթքի մը պէս, որ ցաւատանջ հոգիէ մը պիտի թռչէր անկաշկանդ: Բովներին նստած էր խարտիչահեր մանուկ մը:

Այդ որբացած խմբակը աւերակի մը տպաւորութիւնը կը թողու վրաս, և պատկառանքով մը՝ զոր ցոյց կուտանք նուիրական հրուսթեան մը վերջին բեկորներուն առջեւ: Կը

մօտենամ իրենց : Հիմա աւելի լաւ կը տեսնեմ Եղիային պատկառաղջութեան պատկերը, որ Հիւսն կը յիշեցնէ կատարելապէս . գլխաւորաց ու կորաքամակ՝ ան կը նիրհէ հանդարտօրէն, մահը գրկած, և մերթ ընդ մերթ միայն կը բարտէ երկու ձեռքերը, կարծես վանելու համար այն մղձաւանջները, որոնք կուգան չարչարել իր հիւանդ երեւակայութիւնը : Յետոյ կը դիտեմ առեղծուածային Շուէտուհին, սեւեր հագած, Եղիային կանխահաս սո՛ւգը կրելով, դակադէմ ու լալու մշտապատրաստ աչքերով, և վերջապէս՝ պզտիկը, դարձեալ սգազգեաց, անհանդարտ, վայրկեան մը առաջ փողոց ելլելու ցանկացող :

Այդ եկեղեցին, ուր աստուածային երրորդութեան փառաբանութիւնը երգուած է տարիներէ ի վեր, երեք այդքան աններդաշնակ երրորդութիւն մը տեսած չէր ապահովապէս :

Եկեղեցիին կոշնակը ընդհատ ընդհատ կ'հնչէ, դուրսը, մեռելական թափօր մը առաջնորդելու համար . ու Եղիան կ'արթննայ մետաղեայ զանգուածին հետ . վառվռուն աչքերը քթթած պահուն զիս կը տեսնէ մոմակալի պէս անարին մօտ կայնած և յիշողութեան սրութեամբ մը, որ հանճարին մահացումը կը ժխտէ, անմիջապէս կը ձանձնայ ու կը ժպտի :

Ահաւասիկ այն տեղեկութիւնները զորս կրցայ քաղել իր կցկտուր խօսակցութենէն :

Եղիա Տէմիրճիպաշեան, տասնեւիններորդ դարու հայ գրականութեան կորովի յառաջապահը, այսօր՝ մտաւորապէս ու Ֆիզիքապէս ալ ինկած, անշուք կեանք մը կ'անցընէ . կը բնակի Բերա, փողոց մը «ուր տունները գիշերն ալ բաց կը պահեն իրենց դուռները» ինչպէս կ'ըսէ ինքը հեգնօրէն : Իր քայքայուած առողջութիւնը խնամելու համար իր տաղերգած Շուէտուհին ունի միայն քովը, մօտաւորագոյն ազգականներէն բաժնուած ըլլալով ընտանեկան անհամաձայնութեանց պատճառով : Այս մասին չատ մը հետաքրքրալարժ պատմութիւններ կ'ընէ ինծի, զորս հրապարակելը որքան շահեկան՝ այնքան և աւելի՛ անգաղտնապահ՝ արարք մը պիտի ըլլար :

Օրերը կ'անցընէ առանց ու եւ է մտաւորական աշխատութեան, ընդհանրապէս անկողինին մէջ, «սպասելով մահուան, որ կարծես աւելի կը հեռանայ ամէն բաղձացուած բաներու պէս» : Իր հիւանդ երեւակայութեան ազդեցութեամբ կունենայ հրաշալի տեսիլներ, պարիկային գեղեցկութեանց պատկերներ, զորս նկարագրած պահուն Դրասէր Ատոմէն կամ Հուր Հայրանէն էջ մը քերթուած կարդալու պատրանքը կունենամ : Ամէնէն աւելի իրապաշտ բացատրութիւններով կը ներկայացնէ իր բնակարանին մերկապարանոց կեանքը, ծախու առնուած հաճոյքի ժամերը, որոնց մտածումն իսկ կը գարշեցնէ զիս, կըսէ :

Բայց ինչո՞ւ ուրեմն Տէմիրճիպաշեան կը շարունակէ մնալ այդ հանրամատոյց միջավայրին մէջ : Ինչո՞ւ բարոյականութեան այդ բարձրախօս պաշտպանը, այսօր կը հանդուրժէ ու հեղգօրէն անձնատուր կ'ըլլայ ամէնէն քիչ բարոյական ունեցող պիւրօհիներուն դրացնութեան : Ահա հոս է որ կը կնճռոտին խորհրդապահ Եղիային կեանքի պայմանները : Կին մը ունի իր քով զոր կը սիրէ ու կ'ստէ միանգամայն . անոր ամէն մէկ շարժումներուն կը հետեւի, եկեղեցիին մէջ երբ անկիւ կը հազայ ու կը թքնէ թաշկինակին ծայրը, — «Տե՛ս, տե՛ս, կը գոչէ Եղիան ողորմագին, սրի՛ւն կը թքնէ կոր, խեղճ կին... մեռնի՛ պիտի» :

Ու պահ մը վերջ, երբ նորէն իր ամենօրեայ կէանքին տգեղութիւնները կուգան խռովել իր միտքը, և երբ կը մտածէ թէ այդ բոլոր տառապանքները կը կրէ միմիայն այդ կնոջմէն չբաժնուելու համար, գութի չեղտերը կը մարին տակաւ, զայրոյթը կը փայլատակէ աչքերուն խորէն, և գարշանքի արտայայտութիւնով մը կը բացազանչէ . — Բայց այս կինը ի՞նչ կուզէ ինձմէ, գիշեր ցերեկ օձիքէս չի բաժնուիր, առանձին քայլ մը թող չի տար որ առնեմ, ամէն արարքներուս վրայ կ'իշխէ, զիս գերիի մը պէս կը գործածէ, օ՛հ, սոսկալի է այս... :

Այս երկսայրի կացութեան մէջ կը գըտնուի ահա Եղիա Տէմիրճիպաշեան, և բարոյական ոչ մէկ ոյժ գինքը այդ տարտամու-

թենէն դուրս հանելու չափ զօրաւոր է:— Անճարակ մըն եմ ես, կ'ըսէ, կեանքիս մէջ անհաւատալի անճարակութիւններ ըրած եմ և ներկայ կացութիւնս ալ մեծագոյն ապացոյցն է ատոր:

Իր ընկերուհին, թէպէտ ոչինչ կը հասկընայ մեր խօսակցութենէն, բայց ձայնի չեղտերէն կռահելով թերեւս իր հասցէին շրջակուած դանդախները, անհամբերութեան նըշաններ ցոյց կուտայ և հրամայական եղանակով մը «երթա՛նք, երթա՛նք» կը պոռայ: Անիկա՝ անսարբեր՝ կը շարունակէ դուրս թափել իր սրտին դառնութիւնը, հետզհետէ խռովեալ, ինքնամոռաց, ու այս անգամ իր տրտունջը ինծի կը յիշեցնէ սա տողերը իր մէջ քերթուածին զոր տարիներ առաջ գոց սորվեցուցած էին մեզի. —

Ձիւս սեւ քընչունն այն գիշատէ կեցողացն: Փրկեցե՛ք զիս, չեմ դիմանար այս ցաւոյն, Ա՛ն, չեմ մեռեալ յիովիմ զի... սիրե՛մ դեռ Ձեմ ես դիակ. ո՛չ, զի... կոչեմ բ՛աւք զիսՆեռ:

Շրճանաւարտներու վկայականաց բաշխման հանդէսը արդէն աւարտելու մօտ է, և սլակաւորները, զոյգ զոյգ թէ տարմովին, կ'անցնին կը դառնան մեր մօտէն. կան որ դարնան թիթեռնիկներու չափ սպիտակ ու թրթռուն են, ուրիշներ՝ աւելի մօայլ ու ծանրազուլ: Անոնք վայրկեան մը իրենց աչքերը կը սեւեռեն այդ տարօրինակ մարդուն վրայ, որ հիմա ոտքի վրայ կայնած ու գուազանին կոթնած, գլխանոցը ձեռքը՝ քամակը ծռած մուրիկի մը ձեւն առած՝ իր ժամանակի վարժարանական հանդէսներուն վրայ կը խօսի, իմաստասիրական բանախօսութիւն մը ընելու լրջութեամբ. եւ երբ անդին հանդիսականները դպրոցականի ճառ մը կը ծափահար են ցնծազին, խեղճ եղիան, անդիտակից իր շուրջը անցած դարձածին, չնորհակալ ըլլալու պէս գլուխը կը խոնարհեցնէ, իրեն սեպհականելով այդ ծափերը...

ԼԵԻՈՆ ՔԻՐԻՇՃԵԱՆ

ԵՐԿՈՒ ԲՍՐԵԿԱՍՆԵՐԸ

(ՆՈՐԱՎԷՂ)

Դ.

Երբոր Տիրանին համար ուղեցին Լիւսին, ընտանիքին ուրախութիւնը չափ ու սահման չունէր: Իրենց ակնկալութիւնը լիովին կը պահպուէր անսփառելի մըն էր աս, բառի մը՝ ինչպէս կըսեն, թէ հարուստ և թէ երիտասարդ որ գիտցած է գնահատել իրենց աղջկան չնաշխարհիկ գեղեցկութիւնը և ուրիշ բան մը չի պահանջեր անկէ: Այսպէս կը մտածէին անոնք ու Լիւսի կը հպարտանար: Իրեն համար անծանօթ մը չէր Տիրան: Կը յիշէր թէ ընտանեկան հաւաքոյթի մը մէջ ճանչցած ու ներկայացուած էր անոր: Անկից դուրս՝ պարզ բարեւի մը փոխանակութիւնը միայն կը մնար իրենց ծանօթութենէն՝ երբոր պատահէին իրարու:

Եւ հիմա, իր կեանքի մեծ փոփոխութեանը մէջ քաղուածքը կընէր իր անցեալին զոր մաքուր ու անարատ պահելուն վրայ կը խրոխտանար: Իրօք, անոր պէս հարուստ դասակարգէ երիտասարդներ իրենց քօմբլիմանիկներուն հետ՝ սիրոյ և հիացման բառեր ալ սահեցուցած էին, բայց միայն երազել տուած էին իրեն: Այս էր իր բոլոր գաղտնիքը, անմեղ մեղքը՝ որուն մէջ անշնորհ բան մը չէր տեսներ և զոր ամէն երիտասարդ քիչ շատ կուենեայ:

Այն դարաւասողները, որոնք անուշտ իր առնելիք բարձր, նախանձելի ու միանգամայն հաճելի զիրօրին մէջ չպիտի դադրէին իր շուրջը թրվօալէ՝ նենգաւորներ կը թուէին իրեն: Կարծես արհամարանք մը կըղգար անոնց հանդէպ ու պաշտում մը Տիրանին:

Ոչ ո՛ք թող պնդէ սակայն, թէ սիրային անհաւատարմութիւնը, նոյն խիստ յարմար տեսնուած զոյգերու մէջ՝ մեղադրելի, եպերելի բան մըն է: Ընդհակառակը, պատճառը չի փնտռած, չի քննած՝ այս վճիռն է մեղադրելին ու միանգամայն ծիծաղելին: Առաջին այցելութիւնը զոր Լիւսի ընդունեց

Տիրանէն, կասկած չի ներշնչեց իրեն անոր անկեղծութեանը վրայ: Կարճ ու պաշտօնական բան մըն էր ասիկա: Եւ սակայն յաջորդեալուն մէջ զոր Տիրան երեւոյթները փրկելու համար միայն կուտար, աղջիկը նշմարեց որ այդ երիտասարդը սիրոյ և համակրութեան նշան մը ցոյց չի տար իրեն հանդէպ: Զարմանալի բան, ինք որ բացայայտօրէն ամէնուն պաշտօնի ու սիրոյ առարկան եղած էր, ինք որ սիրուելուն պահով ու սիրելուն կասկածոտ էր, հիմա ինքն էր որ տեսակ մը արհամարհանքի առարկայ կ'ըլլար: Ինչո՞ւ այս պաղ վերաբերումը և ինչո՞ւ այդ ուրախութեան ցոյցը՝ իր նշանախօսութեան առթիւ: Տարօրինակ և անհեթեթ հակասութիւն՝ որուն առջև Լիւսի ապահար՝ պահ մը ուղեց խղել այս խօսքկապը, և սպասել ուրիշ իրական բաղդի մը: Բայց, բաղդին ուշանալը, հեռանալը և նոյն իսկ անհետանալը կար, ինչպէս աղուոր ու դժուարահաճ աղջիկներ՝ այս դառնութիւնը կրած ու տառապած են: Այս մտածումով, ուրեմն, յախուռն ու անխորհուրդ գտաւ իր որոշումը, զոր ետ առաւ իսկոյն: Բան մը չըսաւ իր ծնողքին՝ այս տղուն տարօրինակ վերաբերումին համար, այլ ծածկեց ամէն ինչ, ինքզինքը ամէնէն երջանիկ էակը ցուցնել կեղծելով: Գուցէ անոնք ալ աղքատէին և հետեւումքը իրեն անպատշաճ ըլլար: Այսպէս, ուրիշ բան չէր մնար իրեն ընել, բայց եթէ հասկնալ ու միանգամայն բառնալ պատճառը Տիրանին անտարբերութեան:

Ը.

Ու նորէն երկու բարեկամները առաջուրնէ աւելի սիրով էին ու մտերիմ: Հիմա որ վառն նշանուած էր Մատէնին հետ, Տիրան իր սիրուհիին ուրիշ մը հետ նշանուելը պարտութիւն մը չի նկատեց բնաւ: Իրեն համար այդ տղան պահապանն էր այն թանկագին ու սիրական գանձին որ իրն է և իրը պիտի ըլլայ միշտ:

Սովորական այցելութիւններէն դուրս, որ երկուքին համար ալ անհամ էին ու տաղտկալի, խմբովին պառնակէին կ'ախորժէին: Տիրանն էր որ յայտնեց այս փափաքը ու վառն հաւանեցաւ իսկոյն:

Յայտնի տխրութիւն մը կ'ուրուագծուէր Մատէնի դէմքին վրայ, երբ վառն հետը ըլլար: Մեծ ու բռնազրօսիկ ճիգերով իրենց բերնէն կ'ելլէին խօսքեր ապագայ կեանքերուն վրայ, որ իրենց միութիւնը պիտի կազմակերպէր: Ու աղջիկը դժուարաւ արդէն տեղի տուած էր հօրը ստիպումներուն, որոնց հակառակ վարմունք մը աղետալի հետեւանք մը պիտի ունենար: Այսպէս երկու նշանուած զոյգեր թե թեի մտած՝ կերթային հեռօ՛ւ, ամառի վայրեր, բնութեան ծոցը, հոն՝ ուր հոգիին ծաղկերը կը քակուին և յիշատակները կը պահուին: Լիւսի իր արքենի հասակը ընդեւուզող էթամիի թեթեւ ու շքեղ շրջագծեստովը կը փայլէր: Իր անոյշ ու սիրաղեղ մրմունջները, իր հեշտաբոյր մեղկութիւնը որ ամէնէն քարսիրտ տղան պիտի գինովցնէին, ո՛ր և է աղքատութիւն չէին ըներ Տիրանին վրայ: Ամէն ինչ կեղծելու քաջութիւնը ունեցաւ այդ տղան, բայց հիմա իր չոր ու ցամաք այցելութիւնները ու պառնայները, որոնցմով կուղէր բան մը չզգացնել իր նշանածին, բաւական չեղան սքողելու իր անտարբերութիւնը, Լիւսի վառն մը չէր վերջապէս: Ըսի՛ թէ լուրջ կամ յիմար սիրոյ անձնատուր էակ մը չէր եղած ան: Արդարեւ միջին ճամբան ընտրելով միշտ, անստոյգ ու թուցիկ սէրերով սնած աղջիկ մըն էր: Սիրոյն իր մէջը ծնիլը ու մեռնիլը մէկ եղած էր, իր վրայ յառած անհամար նայուածքները, իր ականջին հասած այլազան մրմունջները, սիրոյ ամէն կերպ յայտարարութիւնները վառած սրտերու sérénadքներ էին՝ իր սրտին մէջ արձագանգուած: Այս բոլորը իրեն սովորեցուցած էին սիրելու եղանակները և ինք պէտք չունէր ուրիշ օգնութեան՝ կարդալու համար գաղտնիքը սիրող հոգիներու:

Ու Տիրան չլացած իր բուռն սիրովը, առանց զգալու գուցէ՝ իր խորհրդաւոր ակնարկները կ'ուղղէր Մատէնին որ կը պատասխանէր: Լիւսիին կեղծած անտարբերութիւնը ու վառնին անհոգութիւնը որ իր բարեկամին վրայ վստահ ըլլալէն աւելի սիրող մը չըլլալուն արդիւնքն էր, ա՛լ աւելի

կը քաջալերէին երկու սիրահարները՝ օգտուելու համար առիթէն։ Ինչ որ ալ ըլլար, սակայն, նախանձիր իրաւունքն էր Լիւսիին, որ չէր կրնար հանդուրժել տեսնելով իր նշանածը ուրիշի մը ճիւղաներուն մէջ բռնուած։ Չէր կրնար ներողամիտ աչքով մը նայիլ Տիրանին որ իրմէ շատ պակաս արժանիք մը ունեցող աղջկան մը փարած էր։ Յուսկնտա մը չէր ինքը. բայց իր գեղեցկութեան գիտակցութիւնը ունէր՝ առանց չփոցած մը ըլլալու։ Ու կը զայրանար, այդ աղջկան դէմ որ յաջողեր էր սիրտը գրաւել անանկ աղու մը որ շատ աւելի գեղանի աղջիկներու սիրտերը կրնար վառել։ Աւաղ, իր նշանուած կեանքին, սիրոյ կեանքին ամէնէն քաղցր ու երջանիկ շրջանին մէջ իսկ՝ արհամարհուած, լքուած կնոջ մը ուրիշէ մը յամայրամուտած նշանածը դարձի բերելու անշնորհ ու ցուատանջ դերին մէջն էր։ Բան մը պակաս չի թողուց անթելի ու խղճամիտ կերպով կատարելու համար իր դերը։ Այն երկիւղով որ Տիրան գուցէ չախորժի իր նախադարձակ սիրոյ յայտարարութիւններէն՝ կոչում ըրաւ դարձեալ իր հպարտութեան, վասնզի հպարտ բայց գեղեցիկ կիներն են որ ամէնէն աւելի կը հալածուին։ Իր վէս դիրքը, իր քիչ մըն ալ վշտացածի երեւոյթը, որուն ետին ներողամտութիւնը կազմ ու պատրաստ կըստասէր՝ ո՛ր և է օգուտ չունեցան։ Նոյն անտաշ բեր տղան մնաց շարունակ։

Ա՛յ հոս կը վերջանար իր լուռ պայքարը։ Իր ճիգերը այլ ևս սպառեցան և ամէն փորձ ի դերեւ ելաւ։ Ազնիւ վարմունքը, փափկանկատութիւնը, հասկցողի և աղդուողի մը հանդէպ միայն իրենց փափաքուած արդիւնքը կուտան։ Ու Լիւսի, մտքով ու սրտով առողջ աղջիկ, չէր ուզեր բնաւ անձնատուր ըլլալ անոր որ զինքը կ'արհամարհէր։ Իր աչքին Տիրան ուրիշ բան մը չէր ալ, եթէ ոչ հարուստ մը լոկ, որուն կը բաղձար։ Եւ հիմա վրէժխնդրական ոգին զոր կը տածէր, չէր կրնար ու չէր ուզել վանել ներսէն։ Անշիշաչարութիւնը իր սահմանը ունի ու չափազանցը ամէն չափազանցութեան պէտք իր մնասակար կողմերը։ Չէր ուզեր ար-

գելք ըլլալ անոնց սիրոյն, բայց չէր սպասեր որ անոնք ալ իր սիրոյն արգելք յարուցանեն։ Իր պատշաճ փոխարինութիւնը պիտի ըլլար ասիկա. զոր աշխարհ պիտի ներէր։ Սիրոյ նմանօրինակ դադանքներ ամուսնութիւնը կատարուելէ՝ վերջ երեւան կելան շատ անգամ, անոնցը հիմա երեւան կ'ելլայ իր սուր հոգեքանութեանը շնորհիւ։ Այս էր բոլոր տարբերութիւնը։ Եւ ինքն ալ այն ընթացքը զոր վերջը պիտի բռնէր՝ հիմակուրէն կը խորհի։ Այն զղջման ու քաւութեան մեղան՝ զոր նշանուելուն՝ շատ կանուխէն արտասանած էր իւրովի, չուտ մըն ալ մոռցնել կուտային իրեն։ Տառապանքը, անտրտունջ համակերպութիւնը, սիրային հաւատարմութիւնը, որ երբեմն կը զօրեն անխիղճներու կարեկցութիւնը հրաւիրելու համար, ամէն խառնուածքի տրուած չեն։ Ու Լիւսի պահելով հանդերձ իր անոյշ ու ժպտուն երեւոյթը՝ վրիժաւուի մը նենգութիւնները խորհելէ չէր դադրէր։ Այս կեղծելու մեծ վարպետութիւնը թերեւս կիներու յատկանիւը ըլլայ, զոր մենք՝ էրիկ մարդիկս չենք կրնար իւրացնել։ Ժանիքը, խոփուադէմ երեւոյթը, զոր մեր զայրոյթը, չար խորհուրդները կը յատկանշեն, կարծես բնութիւնը չէ վայելցուցած անոնց դէմքին, և այս է պատճառը գուցէ որ կինը միշտ առեղծուած մը մնացած է։

Թ.

Ո՞վ է սա բարեկիրթ ու ազնիւ տղան, որ Մատենին թելին կրթնած՝ կը քալէ մտահոգ ու գլխիկոր։ Մարդ կը գլխայ ի տես այդ խնդճուկ էակին, որ իր կայտառ երիտասարդութիւնը, այսպէս, տխուր ու մտածկոտ կ'անցընէ։ Ա՛ս է և զեր նշանուած կեանքը, որուն համար կըսեն թէ ամէնէն քաղցրն է։ Սիւսփանքի կարօտ մէկը կերեւայ ան՝ որ աշխարհէ լքուածի մը երեւոյթով՝ խորհրդաւոր բան մը ունի իր պահած լուծեանը մէջ։ Այս տարտամ վիճակը, որ իր առաջնորդած աղջիկը ուրիշի մը նուիրուած ըլլալու ատուգութիւնը անորոշ կը թողու, ուշադրութիւնը գրաւեց Լիւսիի։

Ու պտոյտները, որոնք լաւագոյն առիթը

կրնձայէին երկու սիրահարներուն զիրար վա-
յելելու համար, հիմա ամէն օր կը շարու-
նակուէին: Լիւսի, ինքն ալ հաճոյք կը զգար
կարծես և հետեւեալ օրուան համար ժամադ-
րութիւն կուտային իրարու: Իր նշանածը կը
խորհէր թէ Լիւսի բան մը կուհած ըլլալուն
համար կը փափաքի իր սիրուհիին ընկերակ-
ցութիւնը, ու կը յախորտար իր խորամանկու-
թեանը վրայ, կը ծիծաղէր միւսներուն միա-
մտութեանը վրայ ու երջանիկ էր:

Քաղաքէն դուրս՝ Շիշլիէն անդին, այդ
ընդարձակ ու ա՛յայ տարածութեան վրայ
խօսակցութիւնները բարձրաձայն կը կատար-
ուէին: Տիրան՝ իր նշանածին հետը ըլլալով
հանդերձ, կրնար խօսիլ Մատլէնին ու երբեմն
ալ բարեկամին հետ: Այսպէս, խառն տեսակ-
ցութիւն մը կուենային, որ շատ անգամ
զուարթ հանգամանք մը կըստանար:

Ա՛լ առջի զայրոյթը ու նախանձը չունէր
Լիւսի: Իր ներդաժնութեան սահմանը ան-
հուն էր: Ու չէր կրնար ընդունիլ որ, սիրող
սրտեր այսպէս իրարու մօտ ըլլան ու բաժ-
նուած մնան: Անիրաւութիւն մըն էր աս, և
ինքն ալ Տիրանին պէս զարգացած ու քա-
ղաքակիրթ, տարասեռ և իրարու օտար էակ-
ներու թեւ թեւի մտնալու սովորութիւնը
յարգողներէն էր, ինչպէս նրբամիտ ու միան-
գամայն միամիտ կերպով մը առաջարկեց:
Կին մը մարդու մը հետ որ ամուսինը չէ և
աղջիկ մը տղու մը հետ որ նշանածը չէ, կրնան
առանց անպատեհութեան հետեւիլ այս սո-
վորոյթին, որուն դէմ ոչ ո՛ք մեղանչեց:

Մատլէն սիրով թողուց իր նշանածը ու
փարեցաւ Տիրանին ու Լիւսի թեւը շնորհեց
Վահանին:

Ու զոյգերը, որ այնքան մօտ կը մնային
իրարու՝ տակաւ կը հեռանային իրարմէ:
Ուղեր կը յօրինէին հիմա, խաղեր որ զիրենք
իրարու մօտ չեն բերեր. վազելու, հեռու
մնալու, զիրար ուշ գտնալու խաղեր, որոնց
մէջ Տիրանի հեղինակութիւնը ու Լիւսիի հա-
ւանութիւնը սքանչելի ներդաշնակութիւն մը
կը կազմէին:

Այս զուարթ մթնոլորտը հիմա կը փարա-
տէր Վահանին մեղամաղձաւութիւնը և ան

ալ կ'ախորժէր այս պտոյտներէն: Առջի ան-
խօսուկ ու լռակեաց տղան չէր ա՛լ: Լուրջ
խօսակից մը ունէր իր դէմը՝ իր գեղանի ըն-
կերուհին որ լեզու կուտար իրեն, և որ սրտի
խօսող հարցեր մէջտեղ նետելով ի յայտ կը
րեւէր անոր մտային պաշարը:

Ճշմարիտ տաղանդի տէր մարդիկ, եր-
բեմն, անմիտ մակդիրը կը ստանան, ըստ ո-
րում առիթ մը չեն որոններ իրենց հմուտ-
թիւնը փայլեցնելու՝ մինչև որ ուրիշ մը տեղի
տայ: Վահան ասոնցմէ էր. երիտասարդ մը
աղուոր ապրանքի տէր, որ սակայն անտե-
սանելի խորշ մը պահուած կը մնար, մինչև
որ, պատահական անցորդ մը՝ ինչպէս Լիւսի,
հետադօտէ նայի, պրպտէ, քննէ ու գնա-
հատէ:

Այս երկու անձանցներուն միջև գաղա-
փարներու համերաշխութիւնը, որ գուցէ ի-
րենց համավիշտ ըլլալէն յառաջ կուգար,
սկիզբը եղաւ իրենց բարեկամութեան՝ եթէ
ոչ համակրութեան:

Ստուգիւ՛ հոգեկան տագնապ մը կերեւար
այդ տղուն վրայ որ Լիւսիի պէս գեղանի
հրեշտակ մը թեւը առած՝ հեռու այն զոյգէն
որ իրենց սիրոյ յորձանքէն մղուած և արբ-
չի ո՛ւ արագ, մոլա՛ր քայլերով անհետ կ'ըլ-
լային երբեմն: Իր սիրտը, որ մինչև այն ա-
տեն ոչ ոքի համար՝ բաբախած էր, հիմա
անոյ լրդովանք մը տուած, աչքերը չէր
կրնար բաժնել այն շնորհալի էակէն, որ քոյլ
ի վեր կը բարձրանայ և որ իր նազանքովը,
իր վառող նայուածքովը շանթահարող բան
մը ունի: Ծայր տուած պղտիկ կայծ մը, որ
խսկոյն սմեհի հրդեհի մը կը փոխուի. ու
Վահան զիւրավառ առարկայ մըն էր, վտանգ-
ներէ զերծ մնացած, որ սակայն աղատում
չունի այլևս: Վեհերիտ ու կոյս տղու մը
աննենդ զգացումը նշմարած էր Լիւսի, ու
կըզգար թէ իր էութիւնը, ինչպէս ամէն երի-
տասարդ՝ այս տղան ալ անտարբեր չէր կըր-
նար թողուլ: Փոյթը՝ չէր որ կեանքին մէջ
կը հանդիպի Տիրանի՝ պէս մէկու մը, որ կ'ար-
համարէ իր փափուկ ու ազնիւ զգացում-
ները, իր գեղեցկութիւնը, իր էութիւնը բո-
լոր՝ զոր կը շնորհէ անոր: Բնա՛զդն էր որ

զինքը հարուստի մը աչք ունենալ մղեր էր. հարստութիւն՝ առանց որու հիմա, այս ան- չնոր՝ ու անյարմար միութեանց շրջանին մէջ իր արժանիքը պիտի անշքանար ու սիրտը աւերակ մը պիտի դառնար:

Իրեն համար լաւագոյն ու յարմարագոյն առիթը, որ ուրիշ ատեն կը պակսէր, հիմա լիովին կը վայելէր գնահատելու համար Վա- հանին ձիրքերը ու աղուորութիւնը: Իր աչ- քին բարեկիրթ ու աղնիւ երիտասարդ մը կերեւար, որ կը հիանայ վրան ու կը մեծարէ զինքը: Ու չեմ գիտեր թէ կին մը ի՞նչ բան կ'ախորժի տեսնել աղուոր երիտասարդի մը մը վրայ, համակերելու համար անոր: Ու տա- կաւ անդիմադրելիօրէն՝ վրէժի դադափարը որ պատճառ եղած էր իրարու մերձեցման, կտրծես կ'անհետանար՝ տեղի տալով սիրոյն առջեւ, որ մտածել կուտար իրեն...:

Այն զգացումը զոր ինքը արթնցուց այդ տղուն մէջ՝ իր ձեռքն էր վառել, հրահրել ու զայն բուռն սիրոյ մը փոխել: Ի՞նչ հարկ սակայն. այդ բոլորը եղած չմնացած էր անոր մէջ, և իր պըրանքը, զոր հետզհետէ կ'ա-ւելցնէր, իր հեշտաբոյր շունչը՝ զինովցնելու միայն կը ծառայէին:

Ապաքէն, Վահան՝ զինովի մը ոնկեղծու- թիւնը, ներքին խռովքը խոտոտվանելու ա- րիութիւնը առած էր կտրծես: Այս հեշտաւէտ միջնորդութեամբ, միանգամ ընդ միշտ, ցրուեց, անհետացուց այն զգաստ ու բարոյամոլ տղու զգացումները, որոնք բնութեան դէմ մաքա-ռելու չափ ամուր ու զօրաւոր հանգամանք մը առած կը թուէին իր մէջ: Կեանքը կը պակսէր իրեն առանց այն էակին, զոր Տիրան յօժարակամ իրեն կը թողուր ժամերով: Եւ հիմա, այդ անխօսուկ տղան՝ աղատ, հա-մարձակ կարծիքներ կը յայտնէր սիրոյ և երջանկութեան վրայ: Պաշտելով հան-դերձ մետաղը, կ'ատէր զայն, որ այսպէս խաղալիք կը դարձնէ սրտերը, ու Լիւսի սրտանց իրաւունք կուտար անոր: Այդ վե-հերոս տղան էր նորէն որ, իր նախասիրու-թիւնը կուտար գեղեցիկութեան մը համար, որ զարմանալի բան, քովիկն էր արդէն: Հոս խօսողը ինքը չէր ալ, այլ սիրտը՝ որ բաց

գիրք մըն էր: Ա'լ բան մը չի կրցաւ պահել անկէ, ըսաւ անոր ամէն ինչ, տուաւ անոր բոլոր գաղտնիքները անխտիր, մէկը՝ միայն պահելով, զոր չի կրցաւ յայտնել, բայց հա-ռաչանք մը զոր պահ մը սրտին խորէն թռու-ցուց՝ այդ ամայի լռութեան մէջ չանհետա-ցաւ այլ իր արձագանգը թողուց Լիւսի սրտին մէջ:

Ժ.

Երկու բարձրագիւր տուներ՝ իրարմէ ոչ շատ հեռու՝ Բերայի հարուստ թաղերուն մէջ կը տեսնուէին: Մէկը նուիրուած է Վահանին, իր ամբողջ կահաւորումովը՝ ճոխ ու ծան-րագին: Ու միւսը, որ Տիրանին մօրը կը պատկանի արդէն՝ վաղուց ի վեր յարգաւոր-ուած՝ երեսի վրայ կը մնար, մինչև որ Լիւսի եկաւ շուք մը տալ այդ տանը և զարդերուն:

Իր կեսրոջ ուրախութիւնը չափ չունէր: Զաւակին տեղը այդ կինը սիրահարած էր իրեն կարծես: Եւ գուցէ իր սիրոյն համար, յար-գեց պատուէրը զոր տուած էր ամուսինը և ինք ամբիսի մը չափ հոս մնալէ վերջ՝ իր աղ-ջըկան թախանձագին հրաւերին անսալով՝ մեկնեցաւ Եւրոպա՝ հոն անցընելու համար ա-մառը:

Վահանին մայրը՝ այդ խեղճ կինը, որ վայրկեան մը չէր կրցած հեռու մնալ իր մէկ-հատիկ զաւկէն, զարհուրած մնաց երբ հարա-նիքէն քանի մը օր վերջը՝ Մատենի ստի-պուսներուն վրայ՝ բաժնեցին զինքը տունն, կեսրոջ և հսկողի տաղտուկներէ զերծ մնա-լու համար:

Հիմա, Տիրան՝ անհամբեր ու կրակոտ տղայ, իր բարեկամութիւնը հաստատ և ան-փոփոխ պահելուն արդիւնքը պիտի տեսնէր: Բարեկամութիւն՝ որ հաճի է ըսել, ատելու-թիւն էր ամբողջ, քաղցր ու հեշտաւէտ ե-րեւոյթի մը տակ, որուն ընտելացած, մոլին եղած էր Վահան: Թախալուք մըն էր պարզա-պէս, ճարտարութեամբ լարուած այդ անմեղ տղուն դէմ՝ որ արդէն իսկ, սիրոյ ցանցին մէջ բռնուած կը տառապէր:

Իր սիրային յաղթանակներով չփայած՝ Տիրան, առի՛կը հիանալի գտաւ վայելելու համար իր սէրը, որ տակաւ կը հատցնէր զինքը:

Այն օրը որ որոշած էր կանուխ մեկնել գրասենեակէն, իր կինն ալ՝ Լիւսի՝ կը պատ-
րաստուէր իր աղգտկաններէն մէկուն այցել-
ել, որ Վերին Վոսփորի գիւղերէն մէկը կը
բնակէր։ Ամէն ինչ նպաստաւոր էր ուրեմն
այդ բաղդաւոր աղուն շուրջը, և իր ուրա-
խութիւնը՝ գերազոյն աստիճանին հասած էր։

Մեղկաբոյր տաքութիւն մը կը տիրէր
այդ օրը։ Արեւը իր լուսաւոր ճաճանքները
սփռած՝ ու երկինքը պայծառ, ձիւնայթոյր
ամպերու ներդաշնակ ցրցքնումովը հմայքոտ՝
կարծես կը պատրաստուէին ունկնդրել սիրող
սրտերու երգերը։

Իր քայլերը ուղղելով դէպ ի հոն՝ ուր
սիրտը կ'առաջնորդէր զինքը՝ Տիրան, իր սի-
րոյն դատը պաշտպանել փորձեց, վճռելով
ինչ որ վաղուց ի վեր իր սիրտը վճռած էր,
թէ չէր կրնար դրժել իր սէրը ու զայն յա-
նուն բարեկամութեան՝ յարգանքի փոխել։
Ձեռքը չէր բնաւ չսիրել Մատէնը, ինչպէս
յոսնցանքը Վահանինը չէր, եթէ սիրած էր
զայն իրօք։ Պէտք էր անսալ սրտին ձայնին,
և ինք տարբեր բան մը չէր ըրած արդէն։
Ու չէր կրնար պարտըկել մտքին մէջ թէ՛
խստութիւնը, ընդդիմութիւնը և նոյն իսկ
ամուսնութիւնը, ինչպէ՛ս կրնան վանել ան-
հետացնել սէրը՝ երկու սիրող սրտերու մէջէն,
եթէ ոչ ալ աւելի դօրացնելու կը ծառայեն
զայն։

Եւ այն կեանքը որ տարի մը ամբողջ
տեւեց, իրենց պէս հեշտամոլ էակներու հա-
մար անոյշ յիշատակ մը չէր ձգած բնաւ.
զգայուն ու բանաստեղծական յիշատակներ
որ սիրոյ տառապանքը հաճելի կընծային։
Իոյրը երգը, քնարերգութիւնը, բիրտ վա-
յելքը եղած է սոսկ, անխուսափելի վախ-
ճանը իրենց կատաղի սիրոյն։

Ու կը յառաջանար սրտատրոյի, մեղաւորի
երկնաղով զոր ամէնէն համարձակն իսկ քիչ
չուտ պիտի զգար այդ պահուն։ Ինքզինքը
անպարտ արձակելէն չգոհանալով, սրտի օ-
րէնքէն դուրս կրօնքի օրէնքը, որ վերջապէս
ուրիշ մը տիրացուցած էր իր սիրունիին, աչ-
քին առջեւ կը պատկերացնէր ուրուականը
Վահանին, լուռ կշտամբանքը անոր՝ այն ա-

հաւոր կեղծիքին դէմ, զոր իր բարեկամութեան
քողին տակ ծածկած էր՝ և որ իր սիրոյն չա-
ցումովը միայն կ'անտեսուէր։

ԺԱ.

Ձեռ գիտեր ինչ բան դրդեց զինքը յան-
կարծ տուն հանդիպիլ անգամ մը։ Ինչ որ
միայն յայտնի էր, սանձարձակ ձիու մը պէս
անվեհեր ու անկաշկանդ՝ կրնար իր քմահա-
ճոյքներուն ծառայել, վասնզի տիրոջ վախը,
որ կնոջը ներկայութիւնն էր, քոյութիւն
չպիտի ունենար այդ պահուն։ Իր տունը
հասնելուն՝ ծառաները, որ այդ պահուն չէին
սպասեր իրենց տիրոջը, չփոխած մնացին։
Մոռցուած բան մը առնելու մտացիր երեւոյ-
թով մը ելաւ վեր, ննջատեսնեակը զոր բաց
կը կարծէր տեսնել։

Վարը, ծառաները իրար կ'անցնէին։ Սեն-
եակին դուռը դոց էր։ Տիկինը հոս չէ, ըսած
էին, մինչ ներսէն ձայներ մը կուգային։ Ո՞վ
կար հոգ այդ ժամուն։ Լիւսին կանչեց, որ
մէջտեղը չիկար։ Հրեց, բացաւ դուռը և
ինչ տեսնէր ... բարեկամը քովին էր
անոր։

Իսկոյն խոյացաւ դուրս, ամօթահար, գըլ-
խիկոր։ Ահարկու վերաւորանքը իր «ես»ին ու
նուստապուծը այն դասէն, որ իր դաւերուն
արդար փոխարինութիւնն էր, ապուշցած
մեղապարտի մը կերպարանքը տուին իրեն։
Այն ուղիղ ու զիպող վճիռը զոր արձակած
էր քիչ առաջ և որուն կատարելապէս համա-
միտ էին Լիւսի և Վահան, չի կրցաւ ու չէր
կրնար յատկացնել լոկ իր անձին։ Ու դարձեալ
երկու բարեկամները, այլ ևս աղատած սրտի
կաշկանդումներէ, ալ աւելի բարեացակամ
մնացին իրարու հանդէպ ...

ՄԻՀՐԱՆ ԴԱԻԹԵԱՆ

ՎԵՐՋ

ՏՈՒԹ. Ա. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

ԲԱՐԻՋԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Կը դարմանէ Տղայոց հիւանդութիւններ
(ներքին հիւանդութիւններ և վիրաբուժու-
թիւն), կը կատարէ քթի, ալաջի և կոկոր-
դի գործողութիւններ։

Երեքշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ և
շաբաթ Բերա, Մեծ—փոքր Գրէտի Լիոնէի
քով, թիւ 331։

Երկուշաբթի և հինգշաբթի Դատը գիւղ,
Տուվար Տիպի, թիւ 12.

Ս Ե Ռ Ե Ն Ա Յ

Կու գայ ձայնը հեղեղատին
Անտառներուն մէջ մեռիկ,
Երբ ժըխորներ պահ մ'ընդհատին,
Հասնի գիշերն երջանիկ.

Արեւելքի գիշեր մը ջինջ,
— Շափուղազարդ երկինքով, —
Ուր հեշտութիւն է ամէն ինչ,
Առէն իր լի բուրմունքով:

Ծառաստուերին տակ սխրալի,
Բուններուն մօտ ու հեռու,
Ջինջ հեղեղը կը թաւալի
Արծաթագեղ լոյսերու:

Ու կը շրջի անտես ոգին
Հոն անտառի ծառերուն,
Խարշափն որոնց թոյլ, հեշտագին
Կը նըւաղէ օրօրուն:

Պիշ կը դիտեմ սաղարթախիտ
Արահեսաները նրբին,
Ու երազներս ականակիտ
Հետզհետէ կը թափին...

...Դեռ մինչև երբ, ըսէ՛, հողիս,
Դեռ մինչև երբ տառապիմ,
Պրպըտելով երազանքիս
Թօշ ծաղիկը մըտերիմ:

Գուցէ վաղը մըթնէ՛ հողիս,
Գուցէ դ՛հն ալ թարշամիս.
Մ'եղծեր հըմայքն անըրջանքիս,
Ու ծաղիկը պաշտումիս...

ՇԱԽԱՍՊ ԾԻԱԾԱՆ

ՄԱՆԻՇԱԿԸ ՈՒ ՀՈՎԻՈՒՀԻՆ

(ՍԻՐԱՅԻՆ ՀԷՔԵԱԹ)

Ա.

Սոխակ մը վշտաբեկ եկաւ թառիլ մաս-
րենիի մը տակուին կանանց ճիւղերուն վրայ
որ ցամքած առուին մօտիկ, իր անուշահոտ
վարդերը կը բանար: Եւ երբ հեռո՛ւն, բարձր
ու թաւախիտ լեռներու ծայրէն դժգոյն լու-
սինը թախծոտ կը ծաթէր, երգ մը երգեց
ան՝ անծանօթ բառերով անուշ մեղեդի մը՝
ու իր աղերսող ձայնին թրթռումները, իրիկ-
ուան սրաթոխի հովին թեւերուն վրայ գա-
ցին խուլ ու մթաւտուեր հովիտներու քնա-
ցող արծաղանդները ցնցիլ:

Լռեց պզտիկ սոխակը և մասրենիի ճիւ-
ղին վրայ թառած, լացաւ դառնօրէն: Իր
ցաւի արցունքէն չիթեր ինկան ցածը՝ չոր-
ցած խոտերուն. չորցած խոտերը կանչոտե-
ցան, կեանք առին կոկին: Ջերմ չիթ մըն
ալ ինկաւ ծոցը մանիշակի մը, որ խամբելու
մօտ՝ խոտերու, տերեւներու ընդմէջէն՝ լուս-
նին տակ լացող սոխակին կը նայէր: Մանի-
շակն ալ կեանք ծծեց արցունքի չիթէն, բա-
ցաւ թերթերը կապոյտ և դողաց բերկրան-
քով:

Բ.

Երբ արծաթ մշուշ մը, իր թովիչ հմայքը
կուտար հեռուի լեռներուն, պզտիկ սոխակը
երկինք նայեցաւ, շարժեց թեւերը և դարձ-
եալ սկսաւ երգել: Սակայն մինչ իր աղեր-
սող ձայնը վսեմ չեչտեր կ'առնէր, հետզհետէ
աւելի խանդոտ, աւելի հնչուն կը դառնար,
ուղիս մը արցունքի՝ որ սրտէն կը բղթէր՝
խեղդեց երգը կոկորդին մէջ անոր, որ հե-
ծումով մը ցաւոտ մարեցաւ մեղմիւ:

Գ.

— Ինչո՞ւ կուլաս, հարցուց մանիշակը կա-
պոյտ, որ՝ խոտերու տերեւներու ընդմէջէն՝
լուսնին տակ լացող սոխակին կը նայէր:

— Կապոյտ մանիշակներու համար, պա-
տասխանեց սոխակն արցունքով:

«Հունա՛, խրճիթին մէջ, երէկ մեռաւ հովուհին, աղուոր աղջիկն այս մարգերուն: Եւ տակաւին, երբ իր թովիչ սև աչքերը, կայծն ու շողն ունէին այս կեանքին, խնդրեց ան իր սիրական հովիւէն՝ մանիշակներ սաղլել իր հողակոյտին մօտ: Մանիշակներ սաղլել, —որովհետեւ մանիշակ մըն էր ինք, եւ շատ կը սիրէր մանիշակները խոնարհ — ու թաղել զինքը այն լացող ուռիի շուքին տակ, որուն ճապուկ ճիւղերէն ես իմ բոյնս եմ կախած:

«Հոն թաղէ՛ զիս, ըսաւ ան պատանի հովիւին, ուր պզտիկ սոխակը լուսնոտ գիշերները անուշ մեղեդիներ կ'երգէ իր վարուժանին մօտիկ թառած: Հոն թաղէ՛ զիս, երբ խամրի ծաղիկը կեանքիս, ու մեռած ըլլամ ալ, որպէս զի չիրմիս խորէն մօտիկ ընեմ իրեն: Եւ ո՞վ գիտէ, թերեւս մահուան օրօր մը երգէ ինծի: Երբ սև մահը տակաւին ինծի մպտած չէր. երբ աչքերս կը շողային կեանքոտ, ու զուարթ կը ժպտէի ես կեանքին, հոն կ'երթայի յաճախ, լացող ուռիի շուքին տակ, եւ սրինգովս որ ա՛լ չի պիտի հեծէ, պզտիկ սոխակին ձաղերուն օրօրներ կը հիւսէի:

«Պատանի հովիւը վշտաբեկ, թաղեց զայն լացող ուռիներուն հովանիին տակ, ուր հիմա թարմ հողակոյտ մը կը բարձրանայ, դեռաւոր հովուհիին պզտիկ հողակոյտը:

Դ.

«Դեռատի հովուհիին պզտիկ հողակոյտին համար, պատանի հովիւը ի զո՛ւր մանիշակների փնտռեց, երաշտութենէ խամրած, երբեմն կանանչ, ծաղկալից մարգերուն մէջ: Եւ հիմայ յուսահատ, անոր մօտ նստած, իր թախծոտ վիշտը կուլայ. —

«Մանիշակ մը կը փնտռեմ, սիրական հովուհիին հողակոյտին համար: Կուլամ, որովհետեւ չի կրցի գտնել զայն, ո՛չ լեռներու կողերուն, ոչ ա՛լ ցաւքելու մօտ տակաւին դալար առուներու ափին:

«Պիտի լամ՝ մինչև որ լուսինը, գիշերուան ջինջ երկնակամարին վրայ իր արծաթի ծիլը բոլորէ. պիտի երգեմ՝ մինչև որ շունչս

հասնի, մինչև որ ձայնս հասնի երկինք և արցունքներս կարող ըլլան ժէռ հողէն կապոյտ մանիշակի մը ծնունդ տալ, — կապոյտ մանիշակի մը գեղեցիկ ու սիրական հովուհիին հողակոյտին համար, որովհետեւ երաշտութենէ խամրած, երբեմն կանանչ, ծաղկալից մարգերուն մէջ, հովիւը չի կրցաւ մանիշակ մը գտնել»:

Ե.

—Ս՛ա, առ գիս հովուհիին հողակոյտին համար, հծծեց ծաղիկը երկչոտ, զգալով մեծութիւնն այն վիշտին, որ պզտիկ սոխակին սիրտը կուռեցնէր, յիշելով կողկողազին ձայնը սրինգին, զոր լսած էր սրաթև հովերէն:

—Ս՛ա, տար գիս, մանիշակ մըն եմ ես, որ կեանք առի արցունքիդ մէկ չիթէն:

Սոխակը զուարթ երգ մը բարձրացուց այն ատեն, տարբեր այն տխուր մեղեդիներէն, զոր երգած էր քիչ առաջ, մասրենիին ճիւղին վրայ, իր վշտին սաստկութենէն: Յետոյ թռաւ խոտերուն տակ թաքչող պզտիկ երկչոտ մանիշակին որ, արցունքներով թրջած, կեանքոտ կը սառստար:

Զ.

—Ինչո՞ւ կուլաս և սգաւոր ես, հարցուց պզտիկ սոխակը ուռենիին վշտահար, յաջորդ դարձան, երբ կը դառնար իր սիրական վայրերուն:

—Ինչո՞ւ չիլամ, ըսաւ ան դառնօրէն, չարժեքով իր ճիւղերը վայրահակ: Հովիւը մոռցաւ մեր սիրական հովուհին, և անոր խոնարհ չիրմին չի դարձաւ այցի: Իսկ այն մանիշակը, որուն կեանք տուիր դուն արցունքովդ քու, և որ միշտ խնկոտ և գեղեցիկ կը ծաղկէր, ան նուէր տարաւ իր դեռատի, նորստաց սիրուհիին:

Պզտիկ սոխակը՝ այն բարձունքէն ուր թառած էր հանգիստի համար՝ վար նայեցաւ տխրօրէն, դեռատի հովուհիին հողակոյտին: Մանիշակը հոն չի տեսաւ, այլ խոտեր որոնք կանանչովը իրենց, անշուք չիրմը կը գըրկէին: Վշտակրեցաւ պզտիկ սոխակը և չուղեց մտածել պատանի հովիւին, որ այնքան

ապերախտ, այնքան անգութ դանուեր էր, գեղեցիկ, մեռած հովուհիին յիշատակին հանդէպ:

Կ Յետոյ երբ գիշերը, լուսինը իր արծաթը ը ցանցնէր ուռիներու կատարին, ցած թռուաւ իր բարձր թառքէն, նուրբ ճիւղի մը վրայ որ մինչև մոռցուած չիրիմը կը խոնարհէր, և երգեց գերազանցապէս տխուր մեղեդի մը, խաբուած հովուհիին քաղցր յիշատակին համար, մինչ ուռին սգաւոր իր արցունքը կուլար:

ՍՍ.ՐՈՐԴԻ

ՆՈՒՈՆ ՈՒ ՆՈՆԵՆԻՆ

Եթէ անցեալ դարերու մարդկութեան կրօնական ու նիւթական բոլոր իմացումները անայլայլ մեղի փոխանցուած ըլլային, հիմա շատ որոշ պիտի տեսնէինք, թէ աշխարհի մէջ չկայ սուսնկ մը, բոյս մը, ծառ մը, ծաղիկ մը, որուն շուրջ դիցաբանական առասպել մը հ'ւսուած չըլլար: Հին դարերու մարդիկ, իրենց մտածելու և ըմբռնելու մանկական, գրեթէ ո'չ-տրամաբանական իմացականութիւնով, չկրնալով տարբեր կերպով մեկնել բնական օրէնքներու համաձայն կատարուած աճումներն ու պտղաբերութիւնները, նոյն իսկ բուսական կեանքը - կենդանականէն յետոյ - կապած են առասպելներու: Հոն ուր մարդկային առողջ իմացողութիւնը կը տկարանայ իրերու պատճառին խելամուտ ըլլալ, իր միտախճական հակումները շուտով օգնութեան կը հասնին իրեն, և ինչ որ բուն գիտութիւնը կը զլանար իրեն այդ նախապատմական չրջաններուն, ամէն երեսոյթներէ ազդեող կրօնական ոգին, զինքը իբր թէ կը լուսաբանէր նիւթական իմացումներու առասպելահիւս դրուագներով, և գոհացում կուտար առերեսոյթ և տնհիմն բացատրութիւններով:

Նուոն ու նոնենին այդ առասպելներով չրջանակուած կը ներկայանան մեզի, անցեալ դարերու խորէն:

Այդ հին դարերուն, երբ բուսաբանական

գիտութիւնը տակաւին գոյութիւն չունէր աշխարհի վրայ, մարդիկ կը հաւատային թէ, կը գրէ Պ. լը Նորման, նշենին կամ աւելի ճիշդը նոնենին բուսաւ Ագդիստիսի արիւնէն: Լիւդական միդաբանութեան զրոյցներուն համաձայն - «Երբ աստուածները սպաննեցին Ագդիստիսը, անոր արիւնին մէկ կաթիլը փոխուեցաւ նշենիի (կամ նոնենիի), որուն պտուղները յղութիւն կուտային կիներու»: Ուրովհետեւ Սուրիոյ կողմերը «Ռիմմոն մեծ» կը կոչուէր նոնենիի ծնունդ տուող Ագդիստիսը, երիտասարդ աստուածը, որ մեռաւ «յարութիւն առնելու համար», Կուպէրնատիս կը կարծէ թէ Ագոնիս ալ ծնունդ տուած է նոնեաձին զրոյցի մը, քանի որ թեմական պաշտամունքներու մէջ Ագոնիս կը կոչուէր նաև Ռիմմոն: Ամէն պարագայի մէջ, սա ստոյգ է որ ամբողջ հին միդաբանութիւնը տարփական յատկութիւն մը ուղած է տեսնել նուոն և նոնիին կարմիր ծաղիկներուն մէջ: Եւ իր ըլլաւոր հատիկներուն խորհրդաւորութենէն հրապուրուած հին փողովորդները փորձուեցան նուոն մէջ տեսնել բեղմնաւորութեան, ծննդեան և հարստութեան ցուցանիշ մը: Եւ որովհետեւ նուոն մէջ բեղմնաւորիչ և արգասաւորիչ բնայատկութիւններ տեսնող միտքերը, ճեղքուած նուոնի մը ձեւին մէջ, մարմնական տարբեր գործարան մը կը կարծէին տեսնել, այդ պատճառով Պուսանիաս ըսելէ յետոյ թէ Հերա դիցուհին իր ձեռքը նուա մը ունէր, կը յաւելու - «Չուզեր մերկապարանոց ընել այն խորհուրդը, որ այդ պտուղի խորհրդանշանականին տակ կը ծածկուի: Այս պատճառով է նաև, որ Կիկերոնին ըսածին համաձայն, Պրասպրայնոս չուզեց երբեք դժոխքը թողուլ, այդ պտուղէն ճաշակելէ յետոյ»: Հերաի «ամուսնութեան ու խոնաւութեան» աստուածի հանգամանքը թերեւս կը բացատրուի, նուա մը բռնած ըլլալուն պարագայով:

Այդ միթաբանական իմացումներու մէջ այնչափ ամուսնութեան և արգասաւորութեան խորհրդանշան մը եղած է նուոն, որ երբ մէկ կողմէ նոնենիի ծաղիկը, ծաղկանց լեզուին մէջ, կոչուած է թարգմանը ըլլալ

զայրագին սիրոյ, միւս կողմէն, հելլենական ծագում ունեցող սովորոյթի մը համաձայն, տեղ տեղ նոր հարսը իր ձեռքով գետին կը նետէ նուռ մը, սա ըմբռնումով, թէ այնչափ զաւակ պիտի ունենայ ինքը, որչափ հատիկներ դուրս նետուին այդ խնձոր — նուռէն:

Նուռը, հակառակ իր տարփալան և դանձր գտնելու իր մոգական զօրութեանն ու նշանակութեանը, մերթ նախ եղբրական նշանակութիւն մը առած է իր կարմիր հատիկներուն համար: Զրոյցներու պատմածին համաձայն, կ'ըսուի թէ նոնենին Ետէոլլի գերեզմանին վրայ տնկուած ըլլալուն պատճառով է, որ իր պտուղները տակաւին այդ գոյնը ունին: Ուրիշ պատմութեան մը նայելով, կ'ըսէ կուպէրնատիս, նուռին գոյնը արդիւնք է Մէնէսիէի (Ménéocée) անձնապանութեան: Գրիգոր Մազիստրոս իր թուղթերուն մէջ, հատ մը ունի, «Յաղագս նուանց բան կատականաց, առ Եփրեմ եպիսկոպոս Բյնոյ», որուն մէջ յայտնի կը ցուցնէ, թէ Դիոնիսեայ կամ Ադոնիսի զրոյցը ծանօթ էր նաև Հայերուն, և թէ այդ զրոյցին կարեւորութիւն տրուած ըլլար կամ ո'չ, կը պահուէր, սակայն, փոխ առնուած աւանդութիւններուն մէջ: Գրիգոր Մազիստրոս, Բյնոյ եպիսկոպոսին կողմէն իրեն զրկուած նուռերը ընդունած ըլլալով, կը գրէ. «Ընկալայ զնուռն ո'չ ի կաթլացն կարծեցելոց յարենէ Դիոնիսիսեայ (Ադոնիսեայ ?) այլ ի բաղկացուց' զնորութենէ անբաղաբար բարւոյ, և զի պարսկական է անուռն Անար:» (Էնար, նուռն):

Ամուսնութեան եւ արգասաւորութեան խորհրդանշանակութենէն բոլորովին անջատ, նուռը յաճախ միմիայն առատութեան բարեբաւտիկ նշան մըն է: Պլուտարքոս կը պատմէ թէ օր մը Դարեհ խոչոր նուռ մը կը բանար. երբ հարցուցին, թէ ի'նչ բան կ'ուզէր ունենալ պարունակուած հատիկներուն չափ առատ. «Զօփիրներ» պատասխանեց Դարեհ: Եւ Զօփիր մեծարժէք ու Դարեհին անձնուէր մարդ մըն էր: Եւ կուպէրնատիս կը պատմէ, թէ երբ Ոթոն այցելեց Թերմոպոլիցիները, ձերուսի մը նուռ մը ներկայացուց, մաղթելով ա'յնչափ յաջող տարիներ ունենալ, ո'րչափ հատիկներ կային նուռին մէջ:

Նուռը Հրէից մէջ ալ մասնաւոր նշանակութիւն մը ունեցաւ շատ հին ժամանակներէ սկսեալ: Ոչ միայն Աստուծոյ կողմէն խոստացուած Աւետեաց երկրին բարեբեր բուսականութեան մէջ նոնենին իր կարմիր ծաղիկներով ամէնէն հմայիչ փունջը ձեւացուց (Թիւք. ԺԳ, 24, Բ. Օր. Ը. 8), այլ և ան գեղեցիկ զարդը կազմեց Երգ Երդոցի հոտաւէտ բուրաստաններուն (Երգ. Դ. 12. 2. 11): Եւ Սողոմոն չլարնեցաւ իր սիրուհիին լալակին տակ ծածկուած այտերը «նուռի» նմանցնել, (2. 7.), երբ միւս կողմէն ինքը նուռի օշարակ կ'ուզէր հրամցնել անոր, իբրև սիրային ըմպելի (Ը. 2.):

Այսպէս ուրեմն մարդկութիւնը երկար դարեր նուռին մէջ մարմնացուց, մերթ առատութեան, մերթ պաղարեւութեան, մերթ սիրոյ և ամուսնութեան խորհրդանշանները, և զանիկա գործածեց կրօնական հրահանգութիւններու մէջ: Հիմնական մարդկութիւնը, սակայն, մոռցաւ իր նախնեաց հաւատալիքները և անոնց հանգամանքը, իր շարժուն ներկային մէջ, որ օր ըստ օրէ կը հեռանայ իր ծագումներէն, և նոնենիին մէջ տեսաւ պարզապէս, գիտնականօրէն, մրտադգիններէն երկաթալ (dictylédon) և բաղմաթերթ (dialypétale) տուկը, որ ուրիշ շատերու նման իր ծաղիկները և իր պտուղը ունի: Գիտութիւնը, իր զանազան ճիւղերով, իր պարտականութիւնը կատարելու կոչուած է:

Եւ երբ բուսաբանութիւնը, իբրև դրական գիտութիւն նուռին կուտայ իր որոշ տեղը և իր յարմարագոյն դիրքը բուսական աշխարհին մէջ, չմոռնանք, թէ դիցարանութիւնն ալ իբրև ծագուած գիտութիւնը անցեալին իր մէջ կը ծրարէ խորհուրդներու փունջ մը, որ պտուղներու բոյրով օժուած է, և այդ խորհրդապաշտ իմաստասիրութիւնը իր միթաքսնական կեղեւին տակ, պիտի գայ շոյել մարդկութեան թափառկոտ մտածումները, մինչեւ այն օրը, երբ իմաստասիրական գիտութիւնն ալ, իր կարգին, զադրի խորհուրդի «անճանաչելի դիցարանութիւն» մը ըլլալէն:

ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ

(Արեւել)

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԻ ՄԸ ՇՈՒՐՁԸ

Կ. Պոլսոյ գեղարուեստական նորութեանց կարգին մէջ՝ իրենց մասնայատուկ եւ ուշադրաւ տեղը ունին այլ եւս Սինկէրի պարբերական Յուլյանդէսները ուր հասարակութեան ամէն դասակարգերը, գեղեցիկ սեռը մանաւանդ, առիթ կ'ունենան մօտէն տեսնելու և մանրազննին կերպով դիտելու թէ այդ Լոսկերութեան կարի մեքենաները ի՞նչ նրբարուեստ ու գունագեղ բանուածքներ կրնան արտադրել՝ թէ՛ առանին պէտքերու եւ թէ՛ արդուզարդի վերաբերեալ, Այս առիթով, Սինկէրի Տնօրէնութիւնը կազմակերպած է իր երրորդ Յուլյանդէսը, նախորդ երկուքէն աւելի՝ ճոխ ու պէսպիսութեամբ լեցուն, իր կեդրոնական շէնքին մէջ (Բերա, Պօն — Մառէի դէմ) որուն միջնայարկի հինգ սրահները գրաւած է, ճաշակաւոր յարդարանքով մը ու նպատակայարմար բաժանումներով:

Շահեկանութենէ զուրկ չենք համարիր՝ նկարագրական տպաւորութիւն մը ներկայել Մասիսի ընթերցողներուն, մանաւանդ որ փոքր թիւ մը չեն կազմեր այն հայ աղջիկները, ու կիներ ալ, որոնք թէ՛ հոս եւ թէ՛ դաւառային քաղաքներու մէջ կը գործածեն այդ մեքենաները, ոմանք տնական պէտքերու կամ ժամանցի համար եւ ուրիշներ՝ իրրեւ ապրուստի հայթայթման միջոց:

Առաջին սրահը տրամադրուած է, մեծագոյն մասամբ, յանախորդներու ցուցադրութեանց, — ժանեակներ, թաշկինակներ, բարձիկներ, ծածկոյթներ եւայլն՝ ամէնքն ալ Սինկէրի մեքենաներով գործուած եւ շինողին անունը կրելով իրենց վրայ: Ասոնց մէջ կը նշմարուին առաջնակարգ ընտանիքներու պատկանող Թրքուհիներու անուններ: Հայուհիներէն՝ կարգադիր Լիւթիի Նիկողոսեան և Տիրուհի Ծարի անունները. նոյնպէս, եւրոպացի եւ յոյն աղջիկներու անուններ: Նրբարուեստ ու ճաշակաւոր գործուածքներ են բոլորին ալ ցուցադրածները: Նոյն սրահին հանդիպակաց կողմը, ուրիշ երկար սեղանի մը վրայ կ'երեւան Հէրէքէի Կայս.

Գործարանին արտադրութիւններէն ամենքոր Սինկէրի մեքենաներով կը պատրաստուին, տեղական ճարտարարուեստին պատիւ բերող այդ մեծ հաստատութեան Տնօրէնին մէկ պաշտօնական նամակովը որով իր գնահատումը ու գոհունակութիւնը կը յայտնէ այդ մեքենաներուն նկատմամբ որո՞ք, ձեռքով բանուածքներուն վրայ իրենց ունեցած շատ մը առուելութիւններուն կը միացնեն ժամանակի խնայողութիւնը: Այս սրահին գետինը կը զարդարեն Հէրէքէի գորգեր ու պատերը՝ նոյն գործարանէն կերպասներ եւայլն:

Երկրորդ սրահը ճշմարիտ զարդասենեակ մըն է (Boudoir) ուր մտնող ելող այցելուհիներու բազմութիւնը իրական կը դարձնէ այս պատրանքը: Հոն կը տեսնուին բազմոցներ, աթոռակներ, պղտիկ գորգեր, պատի ու զարդասեղանի վերաբերող գործուածքներ, որոնք Սինկէրի հաստատութեան ուսուցչուհիներուն ձեռքէն ելած են: Նոյնպէս, չինական ոճով paravent մը, սիվալի հարազատ նմանութիւններ, ծաղկենկարներ, արեւելեան վերտառութիւններ կրող օթոցներ եւայլն. իսկ ամէնէն աւելի աչքի կը զարնէ Վիքթօր Հիւկոյի կեսադէմքը զոր «Քարագալէմ»ով գծագրուած կը կարծէ առաջին անգամ ներս մտնողը, մինչև որ մօտենալով լաւ մը զննելէ յետոյ գտնէ գաղանիք որ... Սինկէրի մեքենաներուն մէջ կը կայանայ: Այդ նկարը, ինչպէս ուրիշ սրահի մը մէջ ցուցադրուած Պիզմարքի կեսադէմքը պատրաստուած են սև մետաքսով ու ճշմարտապէս հիանալի գեղարուեստի գործեր կը կազմեն:

Միջին ներքնասրահը կը ծառայէ սեղանացան, և Յուլյանդէսին կազմակերպիչները հոն տեղաւորած են՝ անոր յատուկ ամէն առարկաներ, մեծ ու փոքր: Մէջտեղը թէյի սեղան մը, չուրջը աթոռներով, մէկ կողմը խոշոր ապակեղարան մը, անդին՝ ծխարանի անկիւն մը՝ հանգստաւէտ բազմոցներով: Աւելորդ է ըսել թէ կահերը՝ անընչութիւն մը չունին Սինկէրի մեքենաներուն հետ, բայց ամէնքն ալ կը կրեն անոր գրոյմը՝ իրենց վրայ դրուած ծածկոյթներով:

սփոռններով, որոնց մէջ ահագին պէսպիսութիւն կայ գործուածքներու: Եւ բարեկեցիկ ընտանիքի մը սեղանատան պէս՝ պատերը կը զարդարեն ակորժաբեր նկարներ, ձկնեղէն, որսի թռչուններ, մրգեղէն՝ միշտ նոյն մեքենաներուն արտադրութիւնը և ասեղնանկար: Յետոյ, արհեստական սիրուն ծաղիկներ:

Զորորդը սրահը կը պարունակէ կնոջական արդուզարդի յատուկ անմիջական պիտոյքներ.— պլուզներ, քօրսաժներ, շապիկներ, չրջազգեստ, հովանոց և այլն. գոյնով, տեսակով, բանուածքով այլազան ու գեղեցիկ և ամենեւին չի տարբերելով համանման առարկաներէն որոնք կը ցուցադրուին մեծ վաճառատանց ապակափեղկերուն մէջ: Այս սրահն ալ ունի իր նկարները և ճակատը կը զարդարէ Սինկէր ընկերութեան ստացած բաղմամբիւ միտալներու չրջանակ մը: Հոս կան նաեւ, գաւառային մասնաճիւղերու աշխատանոցներէ հասած գործուածքներ, աւելի տոկուն քան փափուկ՝ տեղական պէտքերու գոհացում տալու նպատակով պատրաստուած: Այդ աշխատանոցներուն ու կարի մեքենաներուն առջեւ զբաղած գործաւորուհիներու լուսանկարներն ալ բաւական հետաքրքրաշարժ հաւաքածոյ մը կը կազմեն պատի մը վրայ:

Հինգերորդը, Յուցահանդէսին բաժանումներուն, կրնանք յատկանշել Հաւսանեցիկ և ճիւղային կոչելով: Եւ արդարեւ աչքի տեսակէտով՝ ամէնէն գրաւիչն է՝ անիկա, իսկ արուեստական արտադրութեան տեսակէտով՝ ամէնէն ճարտարագործականը: Վարդագոյն անկողին մը՝ իր բոլոր կազմաներով, վերմակ, սաւան, բարձ, բոլորն ալ մետաքսահիւս ու գեղատեսիլ զօրս պատրաստած են Սինկէրի նոյն այն պարզ մեքենաները որոնք կը կարեն շապիկի ու թաշկինակի պէս սովորական առարկաներ: Կնոջական գիշերազգեստ, ննջասենեակի շապիկ թիւ, տանդէլ, ճաշակաւոր ձեռքերով զըրուած են հոս հոն, և այցելուն կը շուարի թէ ո՛ր մէկը զննէ: Այս ննջասենեակին ալ ունի իր նկարները, մանուկանդ կնոջ մը պատկերը, ամէնքն ալ յաջող ու նկարուած ըլլալու illusionը տալով՝ մինչ իրապէս գործուած են:

Սինկէրի Տնօրէնութեան կազմակերպած այս երրորդ Յուցահանդէսը զգալի կատարելագործութիւններ կը ներկայացնէ նախորդ երկուքին վրայ և պէսպիսութիւններ՝ ընդարձակ սահմանի մը մէջ: Արդէն, անոր բացումէն ի վեր, ամէն օր, մինչև իրիկուան ուշ ժամանակ, երկուսեւ բազմութիւն մը այցելուններու՝ ժամերով կը մնայ հոն, մաս մը իրր պարզ հանդիսատես եւ մաս մըն ալ դիտելով, զննելով, կարծիքներ փոխանակելով, հարցումներ ուղղելով Ընկերութեան պատշտօնականներուն ինչպէս նաեւ մեքենաներու առջեւ նստած օրիորդներուն՝ այս կամ այն պատրաստութեան մասին: Վասն զի, հասարակութիւնը օգտակարութեան տեսակէտ մը ունի իր այս այցին մէջ. Սինկէրի մեքենաները, այսօր, ընտանեկան առարկաներու անհրաժեշտ մէկ մասը կը կազմեն, իրրև միջոց մը գործուածքներու աժան և արագ արտադրութեան: Իսկ ներկայ ցուցահանդէսը կոչուած է հաստատելու թէ այդ մեքենաները (Singer - Central Bobine), վարժ ու ճարտար մասներու տակ, մինչև ո՛ր աստիճան կրնան պատրաստել նաև արդուզարդի, պերճանքի ճօխ առարկաներ, ճօխ ու գեղարուեստական:

Յուցադրութիւնը ինքնին պերճախօս է և աւելի գրելու պէտք չի թողուր: Սինկէրի Տնօրէնութիւնը շնորհաւորութեան արժանի է իր այս շահեկան ու օգտաշատ Արուեստահանդէսին կազմակերպութեանը համար:

X.

ՍՏԱՅԱՆՔ՝ մասնագէտ դերձակ—ուսուցիչ Մ. Գալէնտէր էֆ. ի հեղինակած ԱՌՁԵՌԸՆ ԶԵԻ ՈՒ ԿԱՐ գործը, որ Եւաի բարեփոխուած ու ճոխացած մէկ հատորն է, առանց կարաքաժինի: Ձեւագիտական նկարներով զարդարուն՝ օգտակար ու գեղեցիկ հատոր մըն է զոր մասնաւորապէս կը յանձնարարենք ընտանիքներուն:

Յառաջիկային առիթ պիտի ունենանք խօսելու Գալէնտէր էֆ. ի սոյն մասնագիտական գործին վրայ:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Երկուշաբթի օրը, Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ հանդիսաւորապէս տեղի ունեցաւ Վսեմ. Տիգրան էֆ. Տէր-Ներսէսեանի որդւոյն՝ տպագրիչ—Թղթավաճառ Վահրամ էֆ. Տէր-Ներսէսեանի պատկազրութիւնը Օր. Նեկտար Մ. Ալէաթճեանի հետ, կնքահայրութեամբ Միհրան էֆ. Տէր-Ներսէսեանի: Աւարողութեանց կը նախագահէր Ս. Պատրիարք Հայրը՝ չըջապատուած չորս եպիսկոպոսներէ և բազմաթիւ վարդապետներէ ու քահանաներէ: Ն. Ամենապատուութիւնը գեղեցիկ քարոզ մը խօսեցաւ, ընտանիքն ունենալով «Ուրախ լինի փեսայ առ հարսին իւրում» խօսքը և ամուսնական կեանքի վրայ առողջ տեսութիւններ՝ պարզելով՝ շեշտեց նահապետական աւանդութեանց հետեւելու բարի սովորութիւնը: և իր հայրական օրհնութիւնները ձօնեց:

Շնորհաւորութիւնք կատարուեցան Ալէաթճեանց ընկալարանին մէջ, ուր առաջնորդուեցաւ հարսնեւորներու երկսեռ բազմութիւնը՝ հարսին ու փեսային հետ, որոնք ներկայից խնդակցութիւններն ընդունեցին, և ձոխ նուէրներ, ծաղկեփունջեր, շնորհաւորական հեռագիրներ, համակրական արտայայտութեանց մէջտեղ: Այս բերկրալի առթիւ, Տ. Վահան վրդ. Տէր-Մինասեան իր նոր Անգիր Դպրութեան հետեւեալ հատուածիկը ձօնած է նորապսակ ամուսին, իբրեւ Հարսանեկան Հագներգ. —

ՓԵՍԱՅՆ ՅՀԱՐՍՆ

Թե դու նեկսար ես անուշակ,
Սրտիկս եղնի բոզ քեզ բաժակ
Ով սրտիս սիրական,
Հոգուս սիրական:

ՀԱՐՍՆ ՅՓԵՍԱՅՆ

Թե սրտիկդ եղնի ինձ բաժակ,
Սիրածուսն ո՛վ եղնի ծոռակ,
Ո՛վ իմ սրտիս սիրական,
Հոգուս սիրական:

ՀԱՐՍՆԵԻՈՐԲ

Սիրածուսն նեկսարի բաժակին
Սիրածուսն բաժակի նեկսարին
Ծոռակ բոզ եղնին ծոռեւրն ամուսին
ՎԱՀՐԱՄ-ՆԵԿՏԱՐԻՆ:

ՎԱՀՍՆ ՎՐԴ. ՊԱՐՏԻԶԱԿՅԻ



ԲԵՐԱՅԻ բարեկեցիկ դասէն մէկ քանի հայ օրիորդներ գեղեցիկ մտածումը ունեցեր են՝ Համազգեաց վարժարանի մէկ սրահին մէջ պատկերհանութեան և գծագրութեան ճիւղ մը հաստատելու, և այս առթիւ հըրաւիրած են ծանօթ արուեստագէտ Տիգրան էֆ. Եսայեանը, որ չաբաթը երեք անգամ պիտի դասախօսէ: Հայ օրիորդներուն այս գեղարուեստական ձեռնարկը, որ նորութիւն մըն ալ է միանգամայն, իսկապէս գնահատութեան արժանի կը գտնենք:

ԳԱՏԸ ԳԻՒՂԻ

ՄԵԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Բացուած է սեպտեմբեր 6/19ին: Ունի մէկ տարի նախակրթարանի և եօթը՝ կրթարանի չըջան մը: Յետոյ ուսանողք եթէ յարմար դատուին՝ կը զրկուին Վենետիկոյ Բարձրագոյն Վարժարանը և անկից Եւրոպայի արուեստից համալսարաններ: — Լեզուներէն կ'աւանդուին Թուրքերէն, Հայերէն, Գաղղիերէն (նաեւ խօսելուն պարտաւորիչ), Իտալերէն, Գերմաներէն, Անգղիերէն. — Ուսմանց ծրագրին մէջ կան նաեւ ձայնական եւ գործիական երաժշտութիւն, մարմնամարզ եւ առողջաբանութիւն: — Վարժարանը ունի քսան ուսուցիչներ ներքին եւ արտաքին, Պոլսոյ կարողագոյն դասատուներէն ընտրուած: — Իր ծովահայեաց անհամեմատ դիրքէն զատ՝ շէնքին վրայ այս տարի կրեց կարեւոր փոփոխութիւններ՝ առողջապահութեան աւելի եւս նպաստելու համար: — Փափաքողաց կը զրկուի Յայտագիրը:

6-10

Հիմնադիր. — Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տէր Է. ՏՅՈՐԵԱՆ — ՏՈՔԹ. ԵԴՈՒԱՐԳ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի



CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1841 ԻՆ

ԿԸ ԴՈՐՇԷ ՅՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՈԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Այկորէն ի վեր ապահովագրեալներու եղած վնարում 300 միլիոն ֆր.
Այկորէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւնք 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՅՐ 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահանջարկ համեմատու
թիւնն է 74% որով ՔԷՍ ԲԱԴԵՐՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը
հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տաւած երաշխաւորութեանէն:

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Ֆրանսայի ամէնէն նշանաւոր
դրամատէրներէն. ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ֆրանսայի երկաթուղեանց ընկերութեան եւ Քրէտի
Լիօնէի վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ՄՍՐՔԻ ՏԸ ՖԼԵՌ, Դրանսադուրեմի ընկերութեան վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԵՆ ԿԻԼԷՄ, նախկին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիօնէի.

Թուրքիոյ Տնօրէն Գ. ԱՍՏՈՒԱՆԱՏՈՒՐ

Պալիս. Սուլթան-Համադ, Բասթի Բաթլիոնի

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Քրէտի Լիօնէի.

ՓԱՆՕԹ. - Շահաւոր դիրք պիտի տրուի այն ֆենիչին որ կարեւոր արդիւնք մը ի-
րագործած քլլալ սննդանպաս:

ՏՕՔԹ. ԱՆԹՕՆԻԱՏԻՍ

(Dr. Antoniadis)

Մասնագէտ ծածուկ եւ մորթային ախտերու
Բերա, Արգիս փողոց, Թ. 20

(Անգլիական դեսպանատան մօտ)

Վկայեալ Վիէննայի Համալսարանէն ուր, ու-
սած է տասնութէկ տարի, միեւնոյն ատեն
իրր օգնական-բժիշկ ծառայած ըլլալով
Բրօք. Ն. Լամբի, Բարօսիի եւ Տիֆֆէլի
գաղտնի հիւանդութեանց յատուկ քլինիք
ներս մէջ:

Մինակ ծածուկ հիւանդութիւններէ եւ
մորթային ախտերէ առաւապօղններ կ'ընդունի
զո՞ւս կը բժշկէ նորագոյն եւ կատարելա-
գործեալ մէթոտներու համաձայն: Իր մաս-
նագիտութեան զօրութեամբ հիւանդ չըն-
դունիր:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիօնէին դ'ս

Գե. ՆԵ. ՇԷ. օրերը առաւօտեան կանու-

խէն մինչեւ իրիկուան Ժ. 11 1/2

Բե. Գե. Ուր. օրերը ճէն մինչեւ 11 1/2

Երեւոյի օրերը ժամադրութեամբ 5-10



ՌՕՍԻԱ - ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵՍՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՍԻ

1881 մարտ 20-ի Կայս. Ուկրաինական արտոնում

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնք

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵՍՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԴՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՍՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱՌՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՍՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՐԵԼՈՆ ԴԵՄ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած 10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան 12,585,000 »

Ընկերութեան ապահովագրութիւններուն վճարուած դրամագլուխ եւ վնասուց հատուցում 314,768,000 »

1903 տարւոյ մէջ դանձուած ապահովագրին եւ տոկոս 56,585,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան Խան, Վոյվատա, Ղալաթիա, 2-10

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԹՈՐԻԱ ՏՇ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիշի, արկածի, ցմահ բուսակի նիւղեր

VICTORIA

DE

BERLIN

ՎԻԹՈՐԻԱ ՏՇ ՊԵՐԼԷՆ ԿԵՄՔԻ ապահովագրութիւններ ունի թէ՛ բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան Առանց բժշկական քննութեան եղած ԿԵՄՔԻ ապահովագրութիւններ ունի վճարումները չբաթական մասնավճարներով տեղի կունենան, սկսեալ 5 դրուէն

Ապահովագրեալ գումար 1902ին Ֆր. 1,244,457,577

Պահեստի դրամ 1902ին 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 20ին արեւմտահայաստանական եւ ուղղակի կառավարութեան հսկողութեան ներքին:

ՀԵՂ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս. Պաշքա եւ Բրէտի Լիոնէ

Լիազոր. Ընդհ. Ներկայացուցիչ ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՏԱՅԵԱՆ

Տեսուչ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԷՉԷՃԵԱՆ

Քիւ 45 եւ 45 Կ.

2-10

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎՈՐԻԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

1828 թվականի 1829 թվականի հատուցեալ շահաք	274,000,000	Քր.
1829 թվականի գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»
ԱՆՆԱՑ ԶԻՆՆԱԴ		
Մինչև 1829 թվականի հատուցեալ շահաք	129,000,000	Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1829 թվականի գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատուի 60% — ինչ որ «Ինքնին» ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԻ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒ ԹԵԱՆ ԲՈՒՂ:

Արեւելքի համար մասնաւոր սակագոյց՝ գեղջեալ գինեւոյ՝ նպաստաւոր պայ- պաններ անհամեմատ կերպով աւելի գեղազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան մայմանները: Շահաքաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Ինքնին ապահովագրութեան ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կենթարկուին միշտ այն անձինք, որ բահաքաժիններու բարդման (accumulation of es benefices) ՅՈՒՐԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապա- ւովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Գաբրիել Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Ինսայէթ Խան: — Դործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր

քաղաքաց մէջ

2-10



ՅՈՎԱԼԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵԼՐՈՒՆԻ)

ԱՍՏՄԱՆԱՐԾԱՅ

Մուղաթէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեպտանտան

Թերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զբոսանքան արաւքման

Պալպալեան ամէն օր ահաւայի ամէն տե- տակ հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեք- րորթի մինչեւ ժամը 5: Գիշերուան օր եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'ե- րաշխաւորէ իր լեցուցած ու շինած ահա- ները: Ծորեկները ահաւայ քաշել տալու հա- մար որով վարձք մը չկայ. քայել տուողին համարէն կախեալ է: Վկայեալ տալիս արու- ժուհի Տիկին Բոլին եւ օր գանաւի միշտ նոյն դրամատան մէջ, Ազգացներուն ձեռք 2-10

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ- ԳՈՒԼԵԱՆԻ Զինատանէն, Հնդկատանէն, Ճաւայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած քաւմ, հոսաւեհ եւ առողջաբար թէյերէն, որոնք ամառն եղանակին յարմարագոյն ըմ- պելին են:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, Ճէլալ պէյ Խան, Թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



9-10

ԳԵՂԱՐԱՆ ԽԱՉԻԿ ՖԵՄՃԵԱՆ

Կ. Պօլիս, Մահմուտ փառա-Պաշի, Ապուտ ԷՖ.ի խաղին դեմ 261

Սոյն բազմամեայ դեղարանը, այս անգամ նոր կազմակերպութենէ մը ետքը, իսպիկ ֆէստիկանի կողմանէ, քիչ ատենուան մէջ պատիւը ունեցաւ զննատուիլ արգայ հաս-րակութեւնէն, որմէ քաջաւերուելով պէտքը կըզգայ իրեն ուղղութիւնը եւ նպատակը ներկայացնել հո՞րութեան:

ՆՊԱՏԱԿ.—Գաւ ձգել իր յաճախողները միշտ դեղերու թարմութեամբ, դեղագրե-լու արագ եւ ճշդագոյն պատրաստութեամբ, զննու-լաւփութեամբ եւ արուեստին խղճամբ գործողութեամբ:

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ.—Մաքրութիւն, ապահովման դրութիւն եւ պարկեշտութիւն դեղա-րանին ուղղութեամբ եղած են:

Եւրոպական տան մը հետ բանակցած ըլլալով ամէն շաբթու պատուաստի թարմ քիւ-պեր (աքր քալիքմի) կը հասնին քաղաքով: Բացի ասկէ, կը գտնուի օսմանեան եւ եւրոպա-կան նոր եւ միշտ թարմ դեղեր եւ մասնադեղեր, ի մէջ ալ յոյ Մալակայի եւ Պօլսոյի գի-նիներ, տեղական եւ եւրոպական ամէն տեսակ թարմ հանքային ջուրեր, Գօլօնեայի եւ Բաքրանի ջուրերու ալ խառն տեսակները եւայլն: Իսկ միջառաջարկ փոխիւն ամէնէն աղ-դեցիկ տեսակէն միշտ պատրաստ կը դնուի:

Ամէն օր Գեղարան յաճախող Հոյ եւ օտարազգի բժիշկներէն յիշեց մասնաւորաբար հանրածաւթ Բժիշկ ԱԼԼԱՀԷԻՐՏԻ ԷՅ. որ ամէն Գշ. Եշ. Շբ. օրեր ժամը 8—11 իրեն դիմող հիւանդները կը դարմանէ իրեն ծանօթ փորձառութեամբ եւ մասնագիտութեամբ, դեղարանին մասնաւոր դարմանարանը, Գեղարանը ընդհանր ԳիշերՍԱՅԻՆ ՍՊԱՍ 9—10

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Տօքթ. Բ. Էմիրզէ, որ իր բժշկական ուսումը կատարեալագործած է Բարիզի մէջ եւ 15 տարիէ ի վեր մեծ փորձառութիւն չափած է. այժմ հաստատուած է Բերա Պէօյիւք Բարմաք Գաբու, թիւ 16, Մաս-նագէտ է մանկաբարձութեան եւ կանացի հիւանդութեանց եւ առանց մէ զառ նորա-գոյն մեթոտներով կը բուժէ ջղախն ու հազեկան ամէն կարգի հիւանդութիւններ ինչպէս նաեւ արգանդախնայ (hystérie) առաջ եկած հիւանդութիւնները, մաս-նակի անդամաւորութիւն եւ կարկամա-թիւն եւայլն: Ասկէ զատ, սեղորի եւ սո-լարական խոլը (սըրաճա), առանց գոր-ծողութեան՝ նոր դրութեամբ մը կը դար-մանէ, տեղը առանց յայտնի ընելու: Տօքթ. Էմիրզէ էՖ. կը գտնուի Բերա Պէօյիւք Բարմաք Գաբու, թիւ 16 տան մէջ, ուր կիրական են զատ ամէն օր կէսօրէն յետա-ժամը 1էն մինչեւ 4 (Ը.Ե.) հիւանդ կ'ըն-դունի, եւ ուրբաթ օրերն ալ ձրիաբար ըկ-դարմանէ հիւանդները:

3—10

ՏՕՔԹ. ԲՕՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պոլսոյ կայս. Բժշկական վարժարանին, անգամ Բարիզի Բժշկական համաժողովին: Մասնագէտ արանց եւ կանանց ծննդական գործարան. հերու հիւանդութեանց: Պատուոյ վկայա-գիր ունի Պէրլինի, Լոնտոնի, Բեռլինի եւ ուրիշ երկիրներու Ակադ. Գիշերէն: Հնարիչ բժշկական գործիքներու եւ հեղի-նակի մասնագիտութեան վերաբերեալ գործերու: Հիւանդ կ'ընդունի՝ Պոլսոյ կողմը կամուրջին դէմի անկիւնը, իր դարմա-նատան մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ ի-րիկուն, իսկ Բերա, Թաքսիմ, Փրանսա-կան հիւանդանոցին դէմ, ամէն օր առա-ւօտէն մինչեւ կէս օր եւ իրիկուն ժամ 6 էն 9 (Ը. Ե.):

3—10